Թ. ՏԱՐԻ 2674 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 20 ՔԱՂՈՑ 4385 28 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1892 24 ՃԷՄԱԶԻԷԼ ԱԽԸՐ 1310 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعلیه‌ده غلطه‌ده آره‌ولك غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան դահեկան արծաթ		150
» »	Վեցամսեայ »	»	75
» »	Եռամսեայ »	»	40
Օտար երկիրներէ	Տարեկան	Ֆրանք	56
» »	Վեցամսեայ	»	28
Ընտիր թուղթի վրայ մասնաւոր տպագր.	Տարեկան	Օսմ. Ոսկի	2
Գաւառաց թղթատարի ծախքը միօրինակ		Ղրուշ	50

Խմբագրութեանս ուղղուած նամակ կամ այլ գրութիւն
ետ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, ԴԵԿՏ. 28/9 ՅՈՒՆՈՒԱՐ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՔ

ՋԻՆՃԻՐ—ՏԷՐԷ

Ընդ հովանեաւ Օգոստափառ Սուլթանին մեր հայրենակից ժողովրդոց կրթութեան և զարգացման ջանքերուն վրայ մերթ ընդ մերթ ուշադրութիւն կը հրաւիրենք։ Քանիցս խօսած ենք մեր Յոյն հայրենակցաց դպրոցական գործին տուած կարեւորութեան վրայ։ Կ'արժէ որ երբեմն յիշեցնենք նաեւ ինչ որ կ'ընեն Ն. Կ. Վեհափառութեան յոյն հպատակներն։ Ասոնք մեզմէ յառաջդէմ են շատ մը նկատմամբք։ Պոլսոյ մէջ չորս կողմերնիս կը տեսնենք մեծամեծ շէնքեր զորս Յոյնք բարձրացուցած են իբրեւ հոյակապ տաճարներ կրթական գործին։ Բաղդատեցէք՝ շէնքի կողմէ՝ անոնց Ֆէնէրի վարժարանն և մեր լաւագոյն վարժարանը՝ Կեդրոնականը։ Բաղդատեցէք Զաբբիոնն իւր դիմացը գտնուող մսուրին հետ, որ Յիսուսի ծնած մսուրն ալ չէ, այլ Նարեկեան վարժարանն է Բերայի զարգացեալ թաղին։ Հապա անոնց աստուածաբանական և առեւտրական վարժարանն'րն որոց նմանները չունինք մեք ո՛չ ի Կ. Պոլիս ո՛չ ալ՝ տակաւին՝ յԱրմաշ։ Բայց եթէ մխիթարուինք խորհելով որ մեք ալ Կ. Պոլսէ դուրս Գէորգեան ճեմարան մ'ունինք, ապահով եղէք որ Պոլսէ դուրս Յոյնք այս ամեն վարժարանաց լաւագոյններն եւս ունին։ Աւելի քան երբեք ճշդուած է Յունաց վրայ թէ նիւթական զարգացում և իմացական յառաջացում զուգընթաց կ'րնան լինել։ Կէս դարէ ի վեր անոնք զուգահեռաբար կ'ընթանան այս թէ իմացական և թէ տնտեսական զարգացման ճամբուն մէջ։ Երկուքին մէջ ալ անժխտելի կերպիւ գերազանցած են զմեզ։

* *

Բայց հիմա թողունք մայրաքաղաքիս հաստատութիւններն ու մեծ ձեռնարկութիւնները։ Գիտե՞նք թէ Յոյնք ինչե՛ր կ'ընեն գաւառաց մէջ՝ իմացական մշակութեան համար։ Լսած էք հարկաւ Գարամանցի կամ Անատօլուցի Յոյներուն վրայօք, որք անուամբ միայն Յոյն են, որք յունարէն բառ մը չեն հասկնար, այլ [illegible] չինուած կապոյտ... արդուզարդով կուգան Պոլիս, Նպարավաճառի մը քով կ'աշկերտին՝ իրենց լեզուով՝ [illegible] եւ իրենք ալ՝ ըլլան ըլլան՝ նպարավաճառ մը կ'ըլլան օրին մէկը։ Այսքէն անշուշտ տեսած էք. որովհետեւ բազում ներկայացուցիչներ ունի Պոլսոյ փողոցներուն մէջ, մանաւանդ Պոլսոյ Պալըգբազարի կողմերն։ Այս չհանուած Գարամանցի կամ Անատոլցի Յոյներ գիտե՞ք ինչե՛ր ըրած են իրենց բնավայրերուն մէջ։ Այնպիսի բաներ ըրած են զորս մեր Պոլսեցի հայ ջոջերը դեռ ոչ ուրեք կրցած են ընել, իրենց անհամեմատ փափկութեամբ, կենցաղագիտութեամբ ու լուսաւորութեամբ հանդերձ։

Նպարավաճառներու այս բեղմնաւոր սերունդն ի մէջ այլոց կը բխի Կեսարիոյ շրջակայ գիւղերէն։ Այն կողմերն Հայոց չափ ալ Յոյնք կան։ Կեսարիոյ քաղաքին մէջ Հայք Յոյներէն աւելի են։ Բայց գիւղօրէից մէջ թերեւս Յոյնք քիչ մը աւելի ըլլան Հայերէն։ Հին ժամանակն այն կողմեր յունականութիւնն այնքան յարգի է եղեր որ Կեսարիոյ մետրապոլտական, այսինքն աւելի քան արքեպիսկոպոսական, Աթոռն օրթոտոքս եկեղեցւոյ Նախամեծար Աթոռներէն մին է եղեր։ Բայց ապա Յոյնք կամ յունադաւանք նուազելով, արդի համեստ համեմատութեանց մէջ մնացեալ տարր մը կը գտնենք, որ Յոյն է լոկ կրօնքով, իսկ յոյն լեզուի ու դպրութեանց վրայ գաղափար չունի։

Թէեւ գաղափարը չունի, բայց փափաքն ունի։ Այս պատճառաւ, թէեւ այն կողմի Հայերէն անոնք որ յառաջագոյն հայերէն չէին խօսեր նորէն չեն խօսիր, բայց Յոյնք սկսած են հասկընալ յունարէնն, և եթէ ոչ հայերն, որդիք գէթ կը խօսին այս լեզուն։ Ասոր գաղտնիքն հոն է որ այս տգէտ Նպարավաճառք, իրենք չուտելով չխմելով հանդերձ, մեծաքանակ նպաստած են յունական վարժարաններու բացման Կեսարիոյ թեմին մէջ։

* *

Ջինճիր-Տէրէ Կեսարիոյ յոյն մետրապոլտին աթոռանիստ աւանն է, Կեսարիայէն իբրեւ երկու ժամ հեռի, Թալաս հայաբնակ աւանին մօտ։ Մետրապոլիտը Կեսարիոյ մէջ իւր փոխանորդն ունի՝ կառավարութեան հետ կատարելի յարաբերութեանց համար։ Ի Ջինճիր-Տէրէ Յոյնք ունին նաեւ պատմական վանք մը որ մեծ ուխտատեղի մ'է այն կողմերու Յունաց, տեսակ մը մեր Կեսարիոյ Ս. Կարապետին նման վանք մը։ Չէ՞ մի որ Կեսարիոյ հայ Առաջնորդներն եւս ի վաղուց անտի Ս. Կարապետի վանքը կը նստին, և միայն պարբերաբար կ'այցելեն քաղաքն։ Հին ժամանակները կ'երեւի թէ ամեն Առաջնորդք այսպէս են եղեր։ Ինչ և է, Յոյնք, Կեսարիոյ շրջակայից Յոյնք, խորին տգիտութեան մը դարաւոր քունէն արթննալով, ժամանակէ մ'ի վեր հոգածու եղած են Կեսարիոյ թեմն իւր նախկին փայլուն անուան արժանի դիրքի մը վերածելու իմացականօրէն և բարոյապէս։ Այլ և այլ գիւղերու և աւաններու մէջ բացուած նախակրթարաններէն վեր, ի Ջինճիր-Տէրէ հիմնած են կանոնաւոր գիշերօթիկ կրթարան մը, որուն համար տարեկան իբր 1,500 ոսկի ծախք կ'ընեն այնպիսի տեղ մը ուր ապրուստն աժան է յոյժ, և այն 1,500 ոսկւոյ փոխարէն իբր 1,800 ոսկի կը հաւաքեն ամեն տարի։ Միայն 800 ոսկւոյ տարեկան եկամուտ կ'առնուն Բերայի և Ղալաթիոյ մէջ նոյն կրթարանի անուամբ իրենց շինած կամ գնած քարուկիր կալուածներէն, և մնացեալն իրենց մէջ կը հաւաքեն Պոլսեցի Կեսարացի Յոյներ և իրենց Եւրոպաբնակ համակրողներ։ Ասոնց մէջ կայ հատ մը ի Մարսիլիա բնակեալ, որ գլխաւոր սատարն եղած է գործին և ամեն տարի 500 Նաբոլէոն կը ղրկէ միայնակ։ Կեսարիոյ մետրապոլիտը քաջ կը ճանչէր այս յոյն սեղանաւորն ու վաճառականն, և անոր ձեռամբ շատ բաներ կատարել տուած է կրթարանին զարգացման համար, որոյ ուսուցիչք ըստ մեծի մասին յատկապէս Աթէնքի Համալսարանին մէջ պատրաստուած Կեսարացի յոյն երիտասարդներ են։ Եւ տարին 1,500 ոսկի ծախք կ'ընեն ու փոխարէն 1,800 ոսկի կը ժողվեն անձայն անշշուկ, ու մեծ գործ մը կատարելու յաւակնութիւն ալ չունին, մինչ մեր մէջ ամեն բան չափազանցութիւն է։ Այնչափ տարիներու ամուլ խորհուրդներէ և ջանքերէ ետեւ հազիւ ուրեմն Պոլսոյ մօտիկ վանք մը շէնցնելու կը ձեռնարկենք եկեղեցական պատրաստելու համար, և այնչափ բաներ կը գրուին ու կը խօսուին, կը ծանուցուին ու կը հերքուին, կը քննադատուին ու կը պաշտպանուին Արմաշու վանքին վրայ, որ կարծես թէ Ջինճիր-Տէրէի հեռաւոր յոյն կրթարանն, իւր 150 գիշերօթիկներով, Արմաշու վանքին քանի մը պատիկ ընդարձակութիւնը չունենար թէ՛ մտից ու ելից եւ թէ ձեռք բերուած արդեանց տեսակէտով։ Սա ալ չմոռնանք յարելու թէ Ջինճիր-Տէրէի յունական կրթարանին աշակերտաց կէսը թոշակաւոր է, տարեկան 15 ոսկի վճարելու պայմանաւ, և ձրիներուն մէջ կայ մաս մը որ կը պատրաստուի կա՛մ վարժապետութեան և կա՛մ եկեղեցականութեան։ Մնացեալք առեւտրական ասպարէզի կը պատրաստուին առաւելապէս։

* *

Հիմա տեսա՞ք Կեսարացւոց գործնականութիւնը։ Կեսարիոյ Յոյներն անգամ գործնական մարդիկ են։ Եւ ի՛նչ լաւագոյն ապացոյց քան այս Կեսարացի Յունաց ընթացքն՝ հաստատելու համար թէ գործնական ոգին հանրութեան սէրն ու օգուտն անտես ընող ոգի մը չէ՛ անպատճառ։ Ոմանք գործնականութիւն ըսելով ազգային գործերու անտարբերութիւն կը հասկնան։ Սխա՛լ։ Հասարակութեան կրթական, եկեղեցական և տնտեսական զարգացման անտարբեր ըլլալն անտարբերութիւն է, անհոգութիւն է, անզգայութիւն է, ինչ որ կ'ուզէք է, բայց գործնականութիւն չէ՛ բնաւ։ Մարդիկը նպարավաճառ են։ Շատ շատ լումայափոխ կամ սեղանաւոր են այս Յոյներ։ Բայց իրենց գաւառն և հոն մնացեալ իրենց եղբայրներն ու քոյրերը կը սիրեն։ Իրենց գաւառին եկեղեցական անցեալը մանաւանդ պարծանօք կը յիշեն։ Եւ տաճկի ոսկին քրտինքի վերածած, կամ օխայի հետ քիլօ կշռած ժամանակ, խելքերնին միտքերնին ոչ այնքան ապուխտին վրայ կոտրուելիք հերուան հաւկիթներուն շուրջը կը դառնայ, որքան Ջինճիր-Տէրէի և անոր գիշերօթիկ կրթարանին շուրջ, անոր վանքին և Կեսարիոյ Մետրապոլտութեան շուրջ, ա՛յն Մետրապոլտին զոր ցարսօր «Հանուրց Հայոց Մետրապոլիտ» կը յորջորջեն եկեղեցեաց մէջ, ժամանակաւ նորադարձ հայ քրիստոնեաներու մէկ մասին վրայ իբր թէ հոգեւոր իրաւասութիւն ի գործ դրած լինելուն համար։ Կրնա՞ք ուրեմն արհամարհել նպարավաճառութիւնն իբրեւ արհեստ և [illegible] կապոյտ կտաւն իբրեւ... արդուզարդի առարկայ, երբ անոնք կը պատսպարեն այնքան հոգածու, այնքան տաքուկ սիրտ մը, յոյն նոր սերնդեան մէկ մասին, բնագաւառին մէջ բնակեալ մասին բարոյական, իմացական և տնտեսական զարգացման այնչափ նախանձախնդիր ոգի մը։ Ի՛նչ Պոլսեցի Հայեր կան, ի՛նչ զարգացեալ Հայեր կան որք շահեկան դասեր կրնան առնուլ այս տգէտ «Խարամանցիներէն»։

ՆԱԽՆԵԱՑ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ

Սոյն վերնագրով Լրագրոյդ մէջ հրատարակեալ յօդուածն ախորժանօք ընթերցայ, և համամիտ գտնուեցայ բովանդակութեան։

Կը գրէք թէ՝ «Աւելի աղէկ չէ՞ր ըլլար եթէ գրաբար Աստուածաշունչն Էջմիածնի կամ Երուսաղէմի վանուց տպարանէն լոյս տեսնէր։ Անշուշտ աւելի վայելուչ կ'ըլլար։ Իրողութիւն է սակայն որ երեք դարէ ի վեր որ տպագրական արուեստը ծանօթ է Հայերուն՝ ո՛չ մէկ Լուսաւորչական տպարանէ գրաբար Աստուածաշունչ լոյս տեսած է ցարդ։»

Արդ, հոգելոյս Տ. Յակոբ կաթողիկոս Ջուղայեցին երբ 1662 թուին Եւրոպա կ'ուղարկէր զբազմաշխատ Ոսկան վրդ. Երեւանցին (*) տպագրական արհեստին հետամուտ լինելու, առաջին պատուէր տուած էր Աստուածաշունչ Ս. Գիրքն տպագրել նախապէս. և Ոսկան վարդապետ կատարեց Ս. Հայրապետին հրամանն, և ի լոյս ընծայեց զայն յամին 1666 յԱմստերտամ ի տպարանի Սրբոյ Էջմիածնի և սրբոյն Սարգսի, զոր աւարտեց երկու տարուայ մէջ 1668ին։

Ուրեմն Աստուածաշնչի առաջին տպագրութիւնն եղած է լուսաւորչական (ձեր բառով) տպարանի մէջ, Ս. Լուսաւորչի Առաքելական յաջորդ ամենայն Հայոց Հայրապետ կաթուղիկոսի հրամանաւ։

Երկրորդ տպագրութիւնն եղած է՝ «Ի քաղաքն Ստամպօլ ի թաղն Պէկ օղլի կոչեցեալ» 1705 թուին, նոյն Ոսկան վարդապետի օրինակին յար և նման, բայց մանր տառերով, «ի տպարանի ազգականի նորին Ոսկանի վարդապետի՝ Լատինացւոյ Պետրոսի, ի շնորհազարդ Հայրապետութեան և կաթողիկոսութեան սուրբ Աթոռոյն Էջմիածնայ Տեառն Աղեքսանդրի Ջուղայեցւոյ»։

Ուրեմն Աստուածաշնչի երկրորդ տպագրութիւնն եւս եղած է լուսաւորչական տպարանի մէջ, որոյ տիրոջ Պետրոսի Լատինացի անուն տրուելուն վրայ պէտք չէ շփոթիլ, քանզի երկար ժամանակ Եւրոպայի մէջ մնացած լինելուն համար, այդպէս կ'անուանուէր։

Սոյն Ոսկանայ վարդապետի օրինակին համեմատ եղած է երրորդ Տպագրութիւն Աստուածաշնչի, ի ձեռն Մխիթարայ Աբբայի, պատկերազարդ, յամին 1733 ի Վենետիկ, որում պատճառ չունիմք կարծեմ խտրութիւն դնելու, լինելով ծախիւք Հայոց։

Ոսկանեան տպագրութեան վերայ եղած է 1817 թուին ի Սանկտ Պետերբուրգ տպեալ Աստուածաշունչն «Ջանիւք և արդեամբ Ռուսաց Բիբլիական (Աստուածաշնչայ) Ժողովոյն»։

Դարձեալ Ոսկանեան օրինակին համեմատ տպագրուած է Աստուածաշունչն ի Սերամփուր, (Հնդկաստան), ջանիւք և արդեամբք ժողովոյն Աստուածաշնչի, որ ի Կալկաթայ ի Հայրապետութեան Տեառն Եփրեմայ... Կաթուղիկոսի ամենայն Հայոց, յամին 1817։»

Եւ այսպէս, Ոսկան վարդապետի տպագրութիւնն չորս անգամ եւս յիրմէ յետոյ լոյս տեսած կը լինի զանազան տեղեր, երկուսն Աստուածաշնչի ընկերութեանց ծախիւք, իսկ երեքը բուն Հայոց ազգի ծախիւք։

Ի Վենետիկ, զկնի Մխիթար Աբբայի 1805 թուին Զօհրապեան Հ. Յովհ. վարդապետի արդիւնաւոր աշխատութեամբ ի լոյս ընծայեցաւ Աստուածաշունչ Ս. Գիրքն, համեմատութեամբ ընտրելագոյն գրչագիր օրինակաց, որ Ոսկան վարդապետի ըրած անզգոյշ փոփոխութենէ ազատ, մեր նախնեաց գրչին և լեզուին հաւատարմութեամբ և հետեւութեամբ եղած է։

1860 թուին, դարձեալ ի Վենետիկ տպագրեցաւ Աստուածաշունչ մատեանն, իբր թէ բաղդատութեամբ յոյն բնագրաց, բայց Զօհրապեանի հրատարակութենէն գրեթէ տարբերութիւն չունի, և երբեք չէ բաղդատուած յոյն բնագրի հետ, ինչպէս կը հաւաստեն մեզ իրազեկ բանասէրք։

Իսկ թէ՝ «աւելի աղէկ չէ՞ր ըլլար եթէ Աստուածաշունչն Էջմիածնի կամ Երուսաղէմի վանուց տպարանէն լոյս տեսնէր»։ այո՛, շատ իրաւացի է այդ, և մեր իսկ փափագն է տեսնել մի կամ միւս տեղը տպագրուած այնպիսի կերպով՝ որպէս ժամանակիս պահանջն է, բաղդատելով երկուց վանուց մէջ եղած ձեռագիրներն, որպէս և այլ տեղեաց, ընդ Յոյն բնագրին, և այնպէս ի լոյս ընծայելով ծանօթագրութեամբ։

Սիրելի է մեզ յուսալ թէ երկուց Քրիստոսահիմն վանուց արժանաւոր Աթոռակալք կը մտածեն և կը խորհին այդ Աստուածահաճոյ գործառնութեան վերայ, որ իւրեանց մեծագոյն փառքը պիտի լինի։

Ի վերջոյ, շնորհակալութիւն Ամերիկայի Աստուածաշնչի Ընկերութեան, որ վերջապէս բարեհաճեցաւ մեր ոսկեղենիկ լեզուաւ Ս. Գրոց սքանչելի թարգմանութիւնը նոյնութեամբ ի լոյս ընծայել, յաւելցունելով Եբրայական բնագրի տարբերութիւնքն, որ օգտակար կարէ լինել ընթերցասիրաց։

Բիւր գովութեանց արժանի է այդ Ընկերութիւնն որ Աստուծոյ խօսքն ամեն ազգաց և լեզուաց մէջ տարածելու գեղեցիկ սկզբունքն և նպատակն ունի, առանց խնայելոյ ծախուց, որ ողորմութեանց մեծագոյնն է։

Յովհ. Քհնյ. Մկրեան

* *

Սիրով կ'ընդունինք Արժ. Տ. Մկրեան աւագ քահանային դիտողութիւնը, բայց մեք չենք ակնարկած Եւրոպիոյ մէջ եղած Աստուածաշնչոյ հայերէն տպագրութեանց որք հանրածանօթ են, այլ Էջմիածնի, Երուսաղէմի, Արմաշու կամ ուրիշ լուսաւորչական վանքի մը տպարանէն ցարդ Աստուածաշունչ բնաւ չհրատարակուած լինելն յիշած ենք, որ նմանապէս յայտնի է, մինչ այնքան հարիւրաւոր գիրքեր, մեծ թէ փոքր, շարունակ հրատարակուած են ու կը հրատարակուին նոյն վանքերէն։ Այս վանական տպարանք դժբախտաբար երբեք չեն ունեցած Աստուածաշունչ մը տպելու չափ արուեստական կատարելութիւն և նիւթական դրամագլուխ, թո՛ղ բանասիրական հմտութիւնն որ կարենար թերեւս հայթայթուիլ դրամական զոհողութեամբք, և այս պարագայք են որ ի վերջոյ գրգիռ եղած են Աստուածաշնչոյ Ընկերութեան՝ Ս. Գրոց աժան տպագրութիւն մ'ընելու՝ Հայոց ընդունելի կերպիւ։

Եւ ենթադրելով իսկ որ այսուհետեւ Էջմիածին, Երուսաղէմ կամ Արմաշ կարենան գրաբար Աստուածաշունչ տպել, խնդիր է թէ կարո՞ղ են նաեւ 20—25 ղրուշի անհաւատալի գնով ծախել մաքուր տպագրութեամբ և լաւ կազմով ստուար գիրք մը, որ միակ միջոցը պիտի լինէր Ս. Գրոց գրաբար տպագրութիւնը ժողովրդականացնելու մեր մէջ։ Կը տարակուսինք թէ ամեն բարեյօժարութեամբ, նիւթական և իմացական ամեն կարողութեամբ հանդերձ, յիշեալ վանքեր այս լոկ դրամական ծառայութիւնը կարենան մատուցանել Ազգին։

(*) Իբր երկուք ու կէս դար առաջուան Թուաբանութենէն մեր քաղած երկու յօդուածներուն մէջ անունն յիշուած Ոսկան վարդապետն է այս։ Ծ. Խ. «Արեւելքի»։

ԹԵՐԹՕՆ «ԱՐԵՒԵԼՔ»Ի (41)

Է. ՌԻՇՊՈՒՐԿ ԵՒ Է. ԼԻՑԷՆ

ՓԱՐԻԶԻ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻՔ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ
[illegible]

—Ի՞նչ ըսել կուզես, գոչեց պառոնը իր մեղսակիցին բազուկը բռնելով։ Կը կարծես թէ այդ մարդը...

—Բան մը չեմ կարծեր։ Սա միայն գիտեմ որ Պ. տը Պռոնեին ժամանակէ մը ի վեր արուեստագէտուհիին տունը կ'երթայ։ Գիտեմ նաեւ որ այս պահուս հոն է և շատ ուշ դուրս կ'ելնէ, վասնզի ըսաւ թէ կէս գիշերէն առաջ չը սպասեն իրեն։

—Ա՛հ, միտքս կը բանաս, գոչեց իտալացին։ Այս է ուրեմն այդ մարդուն դէմ ունեցած ատելութեանս պատճառը։ Այսպէս, երկուքին ալ խաղալիկն եմ եղեր... Ա՛հ, վա՛յ անոնց... Իրաւունք ունիս Քարլօս, սպանելու է զայն...

—Վերջապէս ինքզինքնուդ եկաք։

—Կ'ըսես թէ այս պահուս անոր տու՞նն է։

—Այո։

—Նախ ապահով ըլլալու եմ թէ չէ՞ս խաբեր զիս... ատելութիւնը կոյր է։

—Սիրոյ պէս։

—Լաւ։ Արիւնս կ'եռայ... գլուխս կըրակի մէջ է... Եթէ կատաղութեանս միայն ականջ դնէի, Ջիթելլաի տունը պիտի երթայի և անոր աչաց առաջ պիտի դաշունէի դերակոմսը։

—Քիչ մ'զոյշ։ Կ'ենթադրեք թէ դերակոմսը ինքզինքն սպանե՞լ կուտայ սուրբ Անմեղի մը պէս... ընդունելով իսկ թէ յաղթող դուրս ելնեք պայքարէն, ուրիշ բան ըրած չպիտի ըլլաք բայց եթէ յիմարութիւն մը որ հետեւանքը պիտի տանի ձեզ...

—Իրաւ է։ Այս իրիկուն գործ ունի՞ս։

—Ազատ եմ։

—Ուրեմն խօսակցինք...

—Հաւանական է որ դերակոմսը հետիոտն վերադառնայ։

—Ինչո՞ւ։

—Կառապանը սաստիկ գինով է... իմ շնորհիւս։ Իր սենեակին մէջ պառկեցուցի և դուռը գոցեցի։

—Կը հասկնամ։ Ժամը տասնեւմէկին Մօն-Թապօր փողոցը պիտի ըլլանք։ Եթէ տունէն դուրս ելնէ, մեռած է։ Մարդ մը այն ժամուն առանձնակեաց կնոջ մը տունէն դուրս չելներ, եթէ սիրահարը չըլլայ։

—Բնականաբար։

—Օ՛հ, իր սիրահա՛րը։ Եւ ես իրենց խաղալիկն եղած պիտի ըլլամ։ Արի՛ւն եւ մա՛հ, ռռնաց իտալացին։

Յանկարծ ձեռքը ճակտին զարկաւ։ Միտքն ինկած էր այն բացագանչութիւնն զոր լսել կարծած էր Ջիթելլաին առանձնասենեակէն։

—Հո՞ն էր անիկա, աներեւոյթ վկայ իմ շփոթութեանս։ Հո՞ն էր անիկա երբ Ջիթելլան փնտռեց զիս սպասաւորի մը պէս։ Ոչ, անկարելի է։ Եւ սակայն...

—Ա՛հ իրաւ, յարեց բարձրաձայն՝ իր խուզարկու նայուածքը սեւեռելով Քարլօսի վրայ, շատ սերտիւ կապուած չես երեւար քու տիրոջդ։ Ձեր երկուքին միջեւ ի՛նչ անցած է։

—Մեր երկու ընտանիքները չեն սիրեր զիրար, ըսաւ Քարլօս խուլ ձայնով։

—Ձեր երկու ընտանիքնե՞րն... կրո՛ղ, պատմէ նայիմ։

—Ոչ, անոնք իմ և ոչ թէ ձեր գործերն են։ Միայն գիտցէք որ կրնաք վստահիլ իմ վրաս՝ անոր դէմ ձեր ամեն փորձերուն մէջ։ Մեր գործերուն համար անոր քով դրէք զիս, և այնպէս պատահեցաւ որ դիպուածը ծառայեց իմ ատելութեանս։

—Ինչպէս որ կուզես։

Ժամը ճիշդ տասնեւմէկին, Պարթոլմէօ և Քարլօս, իրենց վերարկուներուն մէջ փաթթուած, մինաւորիկ կը պտըտէին Մօն-Թապօր փողոցին մէջ, Պռոնեի դերակոմսին դուրս ելնելուն սպասելով։

Բայց աւելի քան երկու ժամ առաջ Մարսէլ Ջիթելլաին տունը չէր գտնուեր։

Ի

ՇՕԲԻՆ-Տ'ՕՌ

Ենրեաիա իր գլուխին մէջ վրիժառութեան հազարումէկ խորհուրդներ կը պըտըտցունէր. բայց ոչ մէկը բաւական կ'երեւէին իր ատելութեան։

Կրնա՞ր վրէժ լուծել դերակոմսէն։ Ասա՞ղ, ոչ։ Իր սիրտն զայն կը ջատագովէր ընդդէմ իրեն։

Միայն Ջիթելլան կրնար հարուածել, անգթօրէն, անխնայ հարուածել զայն... բայց ի՞նչպէս...։

Իր ատելութիւնն աւելի սոսկալի ընող բանն այն էր որ դքսուհին գիտէր իր ոսոխուհիին անհուն գերազանցութիւնն իր վրայ։ Չէր ներեր Ջիթելլաին որ առաքինի և մաքուր մնացած ըլլայ։

Հասկցած էր նաեւ թէ մանկամարդ աղջիկն աւելի իր անաղարտ համբաւին վրայ հպարտ էր քան իր գեղեցկութեան։

Միւս կողմէ, գիտէր թէ Մարսէլ հակառակ էր ամեն գայթակղութեան և իր սիրած անձերն անպատուելու միտող ամեն բան անզգալաբար կը հեռացունէր զայն անոնցմէ։

Մինակ Ռօսթան կոմսին համար Մարսէլ այս խստութիւնը չունէր։ Արդարեւ, ըստ արժանւոյն կը գնահատէր Կասթոնին ապականուած սիրտը. բայց կոմսուհիին նկատմամբ խորին յարգանք կը տածէր, և որդւոյն կը ներէր ի շնորհս մօր։ Կը յուսար որ օր մը Կասթոն, ցոփութենէ խոնջ, պիտի մտնէր այն պատուաւոր ու օգտակար կեանքին մէջ ուր կը կոչէին զինք իր հարստութիւնն և իր անունը։

Մարսէլի բնաւորութեան այս ճանաչումը ցոյց կուտար Ենրեաիային՝ Ջիթելլաէն զայն հեռացունելու միջոցը։ Որոշեց մանկամարդ աղջկան համբաւն աղարտել։

—Ի՞նչ կ'ընէիր եթէ իմ տեղս ըլլայիր, հարցուց սենեկապանուհիին։

—Ե՞ս, տիկին...։ Որովհետեւ մարդու մը սէրը մեծ արժէք մը չունի, հանդարտօրէն և կրցածիս չափ աղէկ կը ճաշէի։ Յետոյ Պալէ-Ռուայեալ կ'երթայի խոշոր անմտութիւն մը մօտիկ ընելու։ Տուն կը դառնայի, կը հագուէի և կ'երթայի գիշերուան մնացած մասն անցունել զուարթ ընկերութեան մը մէջ ուր սիրուն քավալիէ մը մոռցունէր ինձ իմ դերակոմսս։ Աւասիկ։

—Արդարեւ, ընելիք լաւագոյն բանն էր այդ։ Բայց, այսօր, ես այդպէս չպիտի գործեմ։ Վրէժ առնել կուզեմ։

—Անկի՞ց։

—Ոչ, աղջիկէն։

—Ինչո՞ւ համար դերակոմսէն չէք առներ։

—Ինչո՞ւ։ Վասնզի կը սիրեմ։

—Ուրեմն չպիտի յաջողիք։

—Թերե՛ւս... Ա՛հ, եթէ երբեք այս անիծեալ սէրն հեռանար սիրտէս...

—Ամէ՞ն։

—Այս գիշեր դուրս կ'ելնենք, յարեց Ենրեաիա։

—Ո՞ւր կերթանք։

—Պարահանդէս։

—Պարահանդէ՞ս։ Եւ հետեւի՞դ կը տանիք զիս, գոչեց սպասուհին զուարթօրէն։ Մապիլէ՞ն է։

—Ոչ, ի Շօբին-տ'Օռ։

—Շօբին-տ'Օռի պարահանդէ՞սն ի ;

—Պարահանդէս մը... ուր շատ կը յաճախեն գողեր եւ իրենց ընկերները, քըջահաւաքներ ու իրենց ամուսինները եւ ուրիշ արհեստաւորներ։

Ժիւլի նշանակիչ ծամածռութիւն մը ըրաւ։

—Երեւդ կը թթուեցնես... Շատ դըժուարահաճ ես։

—Անշուշտ, երբ մարդ կը ծառայէ փառաւոր կնոջ մը... հաճոյից աշխարհին դիցուհւոյն։

Ենրեաիա ուսերը թօթուեց։

—Քու դիցուհիդ, ըսաւ, գողի մը աղջիկն է։

—Տիկինը քիթիս խնդալ կուզէ, յարեց Ժիւլի ծիծաղելով։

—Ամենեւին։ Կերեւայ թէ մայրս, ողջութեանը կանաչավաճառ ըլլալով շուկային մէջ, անպիտան սրիկայի մը հետ սիրահարուած էր։ Թաղին բոլոր օրիորդներուն սիրականն ըլլալէ ետք, այս անձ, որ իմ հայրս է, կ'ըսեն, ապրելու համար ստանձներ է այն բաւական կասկածելի արհեստն որուն մեծ վարպետութիւնն է թող չտալ որ բան մը մէջ տեղը ձգուի։

—Իրաւ որ տիկինը կը շփոթէ զիս։ Դուքսէ և մարքիզուհիէ մը ծնած կը կարծուիք։

—Վասնզի փոքր ոտքեր և շատ գեղեցիկ ձեռքեր ունիմ։ Բան մը զոր Պ. տը Ռօսթան ազնուականութեան նշան կ'անուանէ։... Յիմա՞րը, իբր թէ ազնուականներ ըլլային... Կը հասկնաս թէ մեր արդուզարդը շատ երկար չպիտի ըլլայ։ Առ սա բանալին և բաց սա խուցն, ուր երբեք չես մտած։ Պարագային յարմար զգեստներ պիտի գտնես հոն։

Ժիւլի բացաւ խուցն եւ, իր տիրուհիին հրամանով գզգլեակներու դէզ մը բերաւ սենեակին մէջտեղը։

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՆԴԷՍ ՕԾՄԱՆ
ԳԼԽԱԴԻՐ Ս· ՅԱԿՈՎԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ
ՍԱՄԱԹԻՈՅ

Ս. Յակովբ Նորաշէն եկեղեցւոյն օծումը կատարուեցաւ երէկ ի ձեռն Ամեն. Ս. Պատրիարք Հօր և մասնակցութեամբ բազմաթիւ եկեղեցական Հարց։ Շինութեան Յանձնաժողովոյ ատենապետ Միհրդատ Աթամեան Բարսեղ էֆէնտի իր մէկ քանի պաշտօնակցաց ընկերակցութեամբ՝ շաբաթ օրը Պատրիարքարան երթալով առաջնորդեց Ս. Պատրիարք Հայրն ի Սամաթիա։ Ն. Ամենապատուութիւն ուղղակի եկեղեցի երթալով, շինութիւնն աչքէ անցուց և գոհունակութիւն յայտնեց։ Ապա, մերձակայ տուն մը երթալով հանգիստ առնելէ յետոյ, զգեստաւորուեցաւ և առաջնորդութեամբ Գեր. Աբրահամ եպիսկոպոս Մամիկոնեանի, Արժ. Գաբրիէլ Ծ. վ. Թամարեանի, Արժ. Ամբրոսիոս Ծ. վ. Ռուբէնեանի և քահանայից ու դպրաց դասերուն, եկեղեցի առաջնորդուեցաւ։ Թափօրին մէջտեղէն կերթար միւռոնակիր քահանան։ Եկեղեցւոյն մէջ, օծման Մաշտոցի յատուկ շարականները կարդացուելէ յետոյ, կատարուեցաւ շաբաթ իրիկուան ժամերգութիւնը։ Գիշերը քահանայք հսկում կատարեցին։

Ս. Պատրիարք Հայրն որ շաբաթ իրիկուն, յետ ժամերգութեան Մաք. Բրգիւզ գնացած էր, երէկ առաւօտ կանուխ վերադարձաւ Սամաթիոյ Ս. Յակովբ եկեղեցին, ուր կը գտնուէին, բացի վերև յիշուած եկեղեցականներէն, Գեր. Գրիգորիս Յովհաննէսեան, Գեր. Բարթուղիմէոս, և Գեր. Գրիգորիս Ալեաթճեան Սրբազանները, Պատր. Գեր. փոխանորդ Հայրը և այլ եկեղեցական հարք։ Եկեղեցին հեղձուցիչ կը լեցուէր խուռն բազմութեամբ ժողովրդեան։ Ժամերգութիւնն ըստ սովորականին կատարուեցաւ մինչեւ [illegible], որմէ յետոյ եկեղեցական դասը տաճարին դուռը երթալով հոն սեղանին քարը պատգարակի մը վրայ դրին և ծածկոց կազմած տարին սեղանը ուր վէմ քարին վրայ զետեղեցին և ջրով ու գինիով լուացին քահանայք։

Պատարագի միջոցին, զոր մատոյց Ս. Պատրիարք Հայրը, Ն. Ամենապատուութիւն կատարեց Սեղանին և Խորհրդանոցին օծումը, շրջապատեալ եպիսկոպոսաց և վարդապետաց դասէն։ Այս արարողութենէն ետք, Ս. Պատրիարք Հայրը քարոզ խօսեցաւ եկեղեցաշինութեան վրայ. յիշեց թէ Գլխադիր Ս. Յակովբ եկեղեցին կառուցուած էր 1858 ին, Յակոբոս Պատրիարքի օրով, և հազիւ 31 տարի դիմանալով, երեք տարի առաջ փակուած էր իր խարխուլ վիճակին պատճառաւ։ Թաղեցիք պիտի չկրնային կատարել վերաշինութիւնը, ուստի Պատրիարքարանի կողմէ կարգուեցաւ մասնախումբ մը որ ժրաջան աշխատութեամբ յաջողեցաւ ի կատար ածել այս բարեպաշտական գործը։ Ամեն. քարոզիչ Սրբազանը օրհնեց և գովեց Յանձնաժողովոյ անձնուէր անդամները և մասնաւորապէս անոր ժրաջան Ատենապետն՝ Աթամեան Բարսեղ էֆէնտին ու ճարտարապետ Մելիտոսեան Գրիգոր էֆէնտին որ ձրիաբար աշխատած էր եկեղեցւոյն շինութեան։

Ս. Պատրիարք Հայրն իր քարոզն աւարտեց բարեմաղթութեամբք վասն արեւշատութեան Վեհ. Սուլթանին։

Քարոզէն յետոյ, շարունակուեցաւ Պատարագն, յաւարտ որոյ եկեղեցւոյ բակին մէջ մատաղ բաշխուեցաւ ժողովրդեան։

Գլխադիր Ս. Յակովբ եկեղեցին շինուած է ընդարձակ պարտէզի մը մէջ, 740 կանգուն տարածութեամբ գետնի մը վրայ։ Եկեղեցին պայծառ, լուսաւոր, սիրուն, կոկիկ շէնք մըն է։ Պարտէզի դռնէն ներս՝ աջ կողմը կը գտնուին քահանայից ու ժամկոչին խուցերն, ու ձախ կողմը՝ Թաղային վարժարանն որ կը կառուցուի Ներսէսեան Սանուց Ընկերութեան ծախիւք։ Թաղ. խորհրդարանն ևս պիտի շինուի ի մօտոյ։ Եկեղեցւոյ զանգակը նուիրած է Մինաս էֆ. Շամլեան։

Եկեղեցւոյ միւս մասերուն օծումը պիտի կատարուի յաջորդաբար քանի մը կիրակի, մէկ մէկ եպիսկոպոսի ձեռօք։

* * *

Յաւարտ արարողութեանց, եկեղեցական և աշխարհական հրաւիրեալք՝ Յանձնաժողովոյ կողմէ պատրաստուած կառքերով գնացին Սամաթիոյ Ն. Վարդուհեան վարժարանն ուր ճոխ սեղան մը յարդարուած էր, որուն ճակատը գրուած էր «Փադիշահըմ չօք եաշա» վերտառութիւնը։ Ս. Պատրիարք Հայրը նախագահեց սեղանին, իր շուրջն ունենալով ներկայ եկեղեցական հայրերն ու աշխարհականները։ Այս վերջինները կը կազմէին Պատրիարքարքարանի պաշտօնէութեան, Հիւանդանոցի Հոգաբարձութեան, Մայր եկեղեցւոյ, Սամաթիոյ Ս. Յակոբ եկեղեցւոյ, Նարլը-գաբուի, Գատը-գիւղի և Խասգիւղի Թաղ. խորհրդոց, Միացեալ ընկերութեանց, Սամաթիոյ Աղքատախնամ և Սանուց ընկերութեանց և մամլոյ ներկայացուցիչք։ Հրաւիրուած էին նաեւ ոստիկանական գօմիսէր Շապան էֆէնտի և Սամաթիոյ ոստիկանապետը։

Սեղանի վրայ առաջին բաժակն առաջարկեց Ս. Պատրիարք Հայրը՝ Վեհ. Սուլթանին կենաց որ ջերմագին ցնծութեամբ ողջունուեցաւ։

Ապա յաջորդաբար բաժակ առաջարկեցին Գեր. Բարթուղիմէոս Սրբազան՝ Ս. Պատրիարք Հօր կենաց, Թաղ. խորհրդոյ անդամ Գէորգ էֆ. Ճիվանեան՝ Իխժամալլըեան էֆէնտիի կենաց, և Գեր. Գրիգորիս արքեպիսկոպոս Յովհաննէսեան՝ շինութեան Յանձնաժողովին ու ճարտարապետին կենացը։

Յետոյ Իխժամալլըեան էֆ. խօսք առնելով սրտայոյզ խօսքերով շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկայից և ամէն անոնց որք նպաստած էին եկեղեցւոյն շինութեան։

Սեղանի աւարտման պահուն խօսք առաւ Գեր. Գրիգորիս եպիսկոպոս Ալեաթճեան, և կրկին բաժակ առաջարկեց յանձնախումբին և Իխժամալլըեան էֆէնտիի կենացն, և հրաման խնդրեց Ս. Պատրիարքէն որ անոնց ննջեցելոց հոգւոյն պաշտօն կատարուի։

Սեղանի աւարտումէն յետոյ սոյն պաշտօնը կատարուեցաւ։

Սեղանի բարեկարգութեան կը հսկէին Պարգեւ Փափազեան, Արշակ Իխժամալլըեան և Լեւոն Սամաթեան էֆէնտիները։

Սեղանէն վերջ, յունաց Նոր Թաղի Թաղ. խորհրդոյն կողմէ բժշկական վարժարանի ուսանող մը թուրքերէն լեզուով խօսեցաւ արեւելեան երկու եկեղեցեաց մասին, նորակառոյց եկեղեցւոյ շինութեան յանձնաժողովին վրայ, եւ երախտագիտական ջերմ զգացումներ յայտնեց Վեհ. Սուլթանին։

Հրաւիրեալք իրենց շնորհակալութիւններն յայտնելով Յանձնաժողովին և անոր ատենապետին, գոհ և ուրախ սրտով մեկնեցան։

Եւ արդարեւ երէկի հանդէսն սկիզբէն մինչև վերջ կատարեալապէս բարեկարգ և գոհացուցիչ էր ու ամենաքաղցր տպաւորութիւն մը թողուց։

Ինչպէս շաբաթ օրը ծանուցինք, Պատրիարքական Գեր. Փոխանորդ Հայրն՝ ընկերակցութեամբ եկեղեցականաց եւ աշխարհականաց՝ նոյն օրը Ֆէնէրի Պատրիարքարանը գնաց ի շնորհաւորութիւն Ծննդեան տօնին։ Գեր. Գաբրիէլ վարդապետ և իրեն ընկերացողք Ֆէնէրի Պատրիարքարանը ժամանելնուն արժանավայել պատիւներով ընդունուեցան պատրիարքական փոխանորդին և եկեղեցականաց կողմէ և առաջնորդուեցան փոխանորդարանն ուր պատուասիրուեցան։ Յետոյ, Գեր. Գաբրիէլ վարդապետ և ընկերակիցք առաջնորդուեցան Ամեն. Տ. Նէօֆիթօս Պատրիարքին քով, Գեր. փոխանորդ Հայրն, յանուն Ամեն. Տ. Խորէն Ս. Պատրիարքին շնորհաւորեց Ծննդեան տօնը։ Գեր. փոխանորդ Հայրն անդ ևս պատուասիրուելէ յետոյ եկեղեցականաց և դպրաց առաջնորդութեամբ Ֆէնէրի մայր եկեղեցին գնաց ուր աղօթեց և բանախօսութիւն մը ընելով մեկնեցաւ, շնորհակալութիւն յայտնելով եղած սիրալիր ընդունելութեանց համար։

Գեր. փոխանորդ Հայրը Ֆէնէրէն ուղղակի Օրթագիւղ գնաց Պուլկարաց Էքզարքարանն, ուր Գեր. Էքզարքին ներկայանալով յանուն Ս. Պատրիարք Հօր շնորհաւորեց Ծննդեան տօնը։

Ներքին լուրեր

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.—Չորրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ Ֆրանսայի Բալ գործարանին ճարտարապետ Պ. Բօյմայի։

Արհեստական շքադրամ՝ Թէվֆօնիաի երաժշտական ընկերութեան տնօրէն Պ. Լանկէի։

Իֆթիխարի շքադրամ՝ կայս. պալատան ոսկերիչ Կարապետ աղաի որդւոց՝ Միհրդատ ու Արմէն էֆէնտիներու և գործաւոր Թադէոսի, Անկէլիի ու Գօչօի։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՋԵԿՈՒՑՈՒՄ.—Երէկ, կիրակի, Վեհ. Սուլթանին թոյլտուութեամբ, գերմանական դեսպան Ռատօլին իշխանը՝ Ն. Կ. Վեհափառութեան ներկայանալու պատիւն ունեցաւ։

ԱՆԱՏՕԼՈՒԻ Գազասկէր Աթաուլլահ էֆէնտի մէկ քանի օրէ ի վեր հիւանդ է։ Վեհ. Սուլթանն իմանալով անոր հիւանդութիւնը, սենեկապետ Ֆաիգ պէյը ղրկեց Գազասկէր էֆէնտիին առողջութիւնը և որպիսութիւնը հարցնել տուաւ։ Ն. Վեհափառութեան հրամանաւ պաշտօն յանձնուեցաւ կայս. պալատան բժիշկներէն Ֆէյզի փաշայի ու Տօքթ. Միւլլէրի դարմանել Աթաուլլահ էֆէնտին։

ԱՄՍԱԹՈՇԱԿ.—Ելմտական նախարարութիւնը հինգշաբթի օրէն սկսաւ մէկ մէկ ամսաթոշակ վճարել կառավարական բոլոր պաշտօնէից։

Բէժիի վարչութիւնը նկատելով որ Աւստրիոյ մէջ կեղծ մարքաներով այլ և այլ ծխախոտներ կը վաճառուին իբրև օսմանեան Բէժիի արտադրութիւն և թէ այդ պարագային առաջքն առնելու համար հարկ է որ օսմանեան Բէժիին մարքան պաշտօնապէս ճանչցուի Աւստրիոյ կողմէ, առաջարկած էր ձեռնհաս իշխանութեան որ Թուրքիոյ և Աւստրիոյ միջև այդ նպատակաւ պայմանագրութիւն մը կնքուի։ Պօլսոյ Աւստրական Սենեակն, որուն կարծիքն ուղղուած էր Աւստրական նախարարութեան կողմէ, իւր շաբաթ օրուան նիստին մէջ խորհրդակցութիւններ կատարեց առ այդ և արդիւնքն ի մօտոյ պիտի մատուցուի Աւստրական նախարարութեան։

ՄԱՏՐԻՏԻ օսմանեան դեսպան Թէրխան պէյ արձակուրդ ստացած ըլլալով, Մատրիտէն ճամբայ ելած է մայրաքաղաք գալու համար։

ՀԱՄԻՏԻԷ ՀԵԾԵԼԱԳՈՒՆԴՔ.—Կայս. Իրատէ մը հրամայած էր համբերի վերածել Համիտիյէ հեծելազօրաց յիսուն գունդերը։ Դ. զօրաբանակի հրամանատար Զէքի փաշա հարկ եղած կազմակերպութիւնը կատարած և տեղեկագրած է Սպարապետի Դրան։

ՂԱԼԱԹԻՈՅ մաքսատան տնօրէն Մուսթաֆա պէյ հիւանդ ըլլալով, բժշկաց յանձնարարութեամբ ժամանակ մը հանգիստ պիտի ընէ։ Ցապաքինումն Մուսթաֆա պէյի, տնօրէնի պաշտօնը փոխանորդաբար պիտի վարէ մաքսային վերատեսչութեան սակացոյցերու տնօրէն Ալի Րիզա պէյ։

ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ՏՈՒՐՔ.—Այս աւուր թուրք լրագրաց մէջ հրատարակեալ պաշտօնական զեկոյց մը հրաւէր կը կարդայ կալուածատէրերու որ կալուածական տուրքէն իրենց ունեցած պարտքն առանց յապաղման փութան հնչուն դրամով վճարելու, որովհետեւ թէև ամսաթոշակ ունեցողներու ամսականը՝ կալուածական տուրքէ ունեցած իրենց պարտուցը պիտի հաշուի, սակայն միւս կալուածատէրերու պարտքին համար բացարձակ կերպիւ որոշուած է հնչուն դրամով գանձել։

ՀՆՏԱԽՏ.—Ի Տրապիզոն դեկտեմբեր 25 ին հնտախտէ մէկ դէպք ու առաջուան բռնուածներէն 2 մահ։ Դեկտեմբեր 25 ի երեկոյէն մինչեւ 26, Տրապիզոնի ու Բլաթանայի մէջ հնտախտի դէպք ու մահ չէ պատահած։ Դեկտեմբեր 26 ի երեկոյէն մինչեւ 27, ի Տրապիզոն նոր դէպք չէ պատահած եւ առաջուան բռնուածներէն մարդ մը մեռած է։ Բլաթանայի ինչպէս նաեւ Վանայ նահանգին մէջ հանրային առողջութիւնը գոհացուցիչ է։

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՔ.—Նախարարաց Խորհուրդը նկատողութեան առնլով բանտարկելոց հագուստ տրուելու խնդիրը, ընդունելի գտած է, սակայն որոշած է որ Ներքին գործոց Նախարարութիւնը նախ տեղեկութիւն առնու գաւառներէն այդտեղի բանտարկելոց թուոյն վրայ ինչպէս նաեւ թէ անոնց հագուստ տալը կարելի՞ է թէ ոչ և գալիք պատասխաններուն վրայ նախ չլժայակայ աշխատութեան կեդրոններուն և յետոյ ուրիշ բանտերու մէջ գտնուող բանտարկելոց հագուստ տալ ու կուրծքերնուն վրայ թուահամարներ դնել ինչպէս նաեւ առ այդ հարկ եղած ծախուց գումարները նշանակել յառաջիկայ տարուան ելմտացոյցին մէջ։ Նոյնպէս առ այժմ կեդրոնական բանտին մէջ գտնուող բանտարկելոց հագուստ շինել և ծախքն՝ 25,000 ղրուշ՝ ներկայ տարւոյ ելմտացոյցին վրայ աւելցնելով վճարել։

Այս որոշումն, որ վաւերացած է կայս. Իրատէով, հաղորդուած է Ներքին գործոց, Դատական և Ելմտական նախարարութեանց։

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ Դրամատան Կարնոյ ճիւղը անցեալ Նոյեմբեր ամսուն մէջ քաղաքին սնտուկէն 79,820 ղրուշ փոխ տուած է 120 անձանց, Երզնկայի սնտուկէն՝ 30,700՝ 49 անձանց, Բասէնի սնտուկէն՝ 58,500՝ 189 անձանց, Բաբերդի սնտուկէն՝ 10,900՝ 23 անձանց, Քղիի սնտուկէն՝ 9650՝ 16 անձանց, Խնուսի սնտուկէն՝ 8300՝ 7 անձանց, Թորթումի սնտուկէն՝ 7450՝ 19 անձանց և Դերջանի սնտուկէն՝ 6700՝ 9 անձանց։ Համագումար 212,020 ղրուշ՝ 432 անձանց։

ԿԱՐՆՈՅ մէջ, ուր հնտախտի պատճառաւ բանտարկեալք դատարանները չէին կրնար տարուիլ և դատավարութիւնք չէին տեսնուեր, այժմ այդ ախտը բոլորովին անհետացած ըլլալով դատարանք սկսած են դատավարութեանց և բանտարկեալք ըստ առաջնոյն դատարանները կը տարուին։ Քաղաքային և զինուորական վարժարանք որք հնտախտին պատճառաւ փակուած էին, վերաբացուած են։

ԲԵՐԱՅԻ հայ-հռոմէական աղջկանց վարժարանի աշակերտուհեաց կողմէ շինուած օսմանեան գեղակերտ զինանշան մը Վեհ. Սուլթանին մատուցուած ըլլալով Ն. Վեհափառութիւն իւր բարձր գոհունակութիւնը յայտնած է, կայս. պալատան առաջին քարտուղարը կայս. սոյն գոհունակութիւնը հաղորդած է հայ-հռոմէականաց Պատրիարքարանին։

ՀԱՇՈՒԱԿԱԼՈՒԹԵԱՆ դիւանի անդամներէն Մըսըրը Օննիկ պէյ, որ միանգամայն անդամ է Պօլսոյ Ապահովութեան Սնտուկի վարչական ժողովին, այդ վերջին պաշտօնէն հրաժարած ըլլալով, այդ պաշտօն յանձնուած է Հաշուակալութեան Դիւանի անդամներէն Պէսիմ պէյի։

ՔԱՂԱՔԱՊԵՏ վսեմ. Րըտվան փաշա հիւանդ ըլլալով երէկ և առջի օրն իւր պաշտօնատեղին չգնաց։

ԹԱՄՖԻԵԼԻ ԱՐԺԷԹՂԹՈՅ տասը հազարնոցներուն ու հազարնոցներուն կեղծերը տեսնուած ըլլալով, բուն իսկ արժէթուղթերը կեղծերէն որոշելու համար հետեւեալները պէտք է դիտել։

Տասը հազարնոց իսկական արժէթղթոց կապոյտ շրջանակներու վերի մասին ձախ անկիւններուն՝ 10,000 թուանշանը կրող տեղին ձախ եզերքի զուգահեռական գծերուն մէջտեղը պարապ է, մինչդեռ կեղծին մէջ այդ պարապ տեղը գիծ մը կայ։ Այդ տեղի աջ կողմին տակը երկու զուգահեռականներու մէջ բարակ գրով նշանակեալ «տասը հազար ղրուշ» բառերը՝ իսկական արժէթղթոց հետ բաղդատուելով կեղծերուն մէջ խառն ի խուռն նշանակուած են։ Կեղծ թուղթերուն ետին գտնուած գրերն ևս բնաւ չեն նմանիր իսկականներուն։ Նոյնպէս կան այլ և այլ տարբերութիւններ կեղծերուն ու իսկականներուն միջեւ։

ԴԱՏԱԿԱՆ նախարարութեան և Ոստիկանութեան նախարարութեան միջեւ կատարուած բանակցութեամբ մը, կ՚ըսէ «Սապահ», որոշուած է Աֆրիկեան Տրիպոլսոյ բանտը ղրկել Տրապիզոնցի Ռուբէն անուն մարդ մը, որ վաճառական Աղնաւորեան Սարգիս էֆէնտիէն սպառնալիքով դրամ պահանջած ըլլալուն համար երեքուկէս տարուան շղթայակապ աշխատութեան դատապարտուած և այդ վճիռը վերջնական հանգամանք մը ստացած է։

ԷՆԿԻՒՐԻԻ երկաթուղւոյ կառախմբոց երթեւեկութիւնն սկսած ըլլալով, կայս. Իրատէի մը համաձայն, տասն ոստիկաններ պիտի աւելնան արդէն պաշտօնավարող ոստիկանաց թուոյն վրայ։

—Նահանգին տասանորդի տրոց քանակութիւնն այս տարի 28000 ոսկւոյ առաւելութիւն մը ցոյց տուած է։

ՈՐԹԱԼՈՒԺԻ ջնջման համար կազմեալ յանձնաժողովն շաբաթ օրն ի նիստ գումարուեցաւ Նաֆիայի պաշտօնատան մէջ և խորհրդակցութիւններ կատարեց այդ նպատակաւ պատրաստուած ծրագրոյ մը վրայ։

ՄԵԿՆՈՒՄ.—Կայս. Թիկնապահ միրլիվա Սայիտ փաշա և նաւային միրլիվա Ահմէտ Արիֆ փաշա երէկ առաւօտ Էնկիւրի ուղեւորեցան Հայտար-Փաշայի կառախումբով։

ԲԵՐԱՅԻ պատժական դատարանին կից գտնուած յունական վարժարանին տղայոց կողմէ զբօսանքի ատեն եղած աղմուկը դատավարութիւնները խանգարելնուն պատճառաւ՝ բանակցութիւնք կը կատարուէին Դատական և Կրթական նախարարութեանց միջեւ։ Արդ, նոյն վարժարանի տնօրէնը, կրթական նախարարութեան կողմէ եղած զեկոյցի մը պատասխանելով, յայտարարած է թէ վարժարանն արդէն նորակառոյց ուրիշ շէնքի մը մէջ պիտի փոխադրուի, թէ աշակերտք առայժմ մաս առ մաս զբօսանքի պիտի հանուին և թէ հսկողութիւնք պիտի ըլլան ո և է աղմուկի տեղի չտալու համար։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ Թելերէ մէկ քանիներն առջի գիշերուան փոթորկի պահուն կոտրած ըլլալով, հեռագրական վերատեսչութիւնը մէկ կողմէ թելերուն նորոգման ձեռնարկած և միւս կողմէ ալ հեռագրական հաղորդակցութիւններն ուրիշ ճամբաներով կատարել տուած է։

ԴՐԱՄԱՆԵՆԳ.—Ոստիկանութեան պաշտօնեայք անցեալ օր ի Ղալաթիա, Թիմուր անուն մարդ մը ձերբակալեցին մէճիտիյէի կեղծ դրամ մը քշելու պահուն։

ՏՐԱՊԻԶՈՆԻ նախնական դատարանին հարցաքննիչ դատաւոր կարգուած է Հասան պէյ։

ԱՐԿԱԾՔ.—Էսկիշէհրէն Հայտար-Փաշա եկող կառախումբը երէկ Կէօզթէբէէն անցնելու պահուն Եանի անուն քառասուն և հինգ տարեկան մարդ մը կոխոտեց։ Եանի ծանրապէս վիրաւորուած՝ Հայտար-Փաշայի հիւանդանոցը տարուեցաւ։

—Շիրքէթի կառաբարձ շոգենաւը շաբաթ օրը ժամ 4ին Գասըմփաշայի նաւամատոյցին մօտենալու պահուն նաւակ մը խորտակեց։ Նաւակին մէջ ոչ ոք կար։

ՓՈԹՈՐԻԿ.—Մէկ քանի օրէ ի վեր մայրաքաղաքիս մէջ տիրող փոթորիկն այլ և այլ վնասներ պատճառած է։ Եյուպի առջեւ գտնուած մէկ քանի պարապ նաւակներ ընկղմած են։ Եյուպի մէջ պատեր փլած են, սակայն մարդու կորուստ չէ պատահած։

—Շաբաթ օրը Սալաճաքի առջեւ անգլիական շոգենաւ մը խրած է բուռն հոսանքէն մղուելով։ Շոգենաւը ածուխ բեռցած՝ Քարտիֆէն կուգար։

—Ուրբաթ օրը Սկիւտարի առջեւ նաւակ մը ընկղմելու պահուն ազատուած է անմիջական օգնութեանց շնորհիւ։

—Պէօյիւքտէրէի առջև խարսխած հելլենական առագաստանաւու մը նաւապետը մակոյկով մը ուրբաթ օրը Գուրուչէշմէի առջեւ խարսխած նաւ մը գնացեր է այցելութեան համար։ Գիշերը վերադառնալու պահուն իր մակոյկն եկած չըլլալով Միխալ անուն մարդու մը մակոյկը նստեր է Պէօյիւքտէրէ երթալու համար։ Ճամբան թեւեճակը կոտրելով մակոյկը հոսանքէն բռնուեր և 38 ժամ ծովուն վրայ մնալէ յետոյ, երէկ առաւօտ Խըրսըզ Ատա ժամաներ է։ Հոն հովիւներու կողմէ հիւրընկալուեր են, սակայն Միխալ ցուրտէն սառելով մեռեր է։ Հելլենական նաւաձիգ շոգենաւ մը, որ այդ մակոյկը փնտռելու ելած էր, նոյն կղզին երթալով նաւապետն առեր է։

—Ի Բիրի Փաշա նախընթաց գիշեր պատ մը փլաւ և փլատակներն ինկան տան մը վրայ, ուր հրեայ ընտանիք մը կը բնակէր, սակայն մարդու կորուստ չպատահեցաւ։

—Մէսաժըրիի ու Լոյտի երկու շոգենաւեր, որք նախընթաց օր աստ կսպասուէին, տակաւին ժամանած չեն օդերու գէշութեան պատճառաւ և լուր առնուած չէ թէ ո՛ւր կը գտնուին։

ԵՐԿՈՒ ԿՕՇԻԿՆԵՐ.—Նախընթաց օր, Էյուպի մէջ, բաւական մաքուր հագուած կին մը, որուն վրայէն համեստութիւնը կը վազէր, կամացուկ մը, մեծ զգուշութեամբ կը մօտենայ Քաբու-Զէնճ փողոցը գտնուող տան մը դրան, մեղմիկ կը զարնէ դռնակը։ Դուռը կը բացուի և աղախին մը կը ներկայանայ։ Համեստունակ կինը չիկնելով կը հարցունէ թէ երկու հանըմներուն տունն ա՞յդ էր։ Աղախինը, հոն ձգելով ամօթխած տիկինը, կը փութայ իմաց տալ իր տիրուհիներուն թէ կին մը եկած է եւ տեսնել կուզէ զիրենք։

Հանըմները կը հրամայեն որ վեր ելնէ այցելուհին։ Աղախինը կը վազէ դուռն, որուն բաւականին շրջանակը պարապ էր հիմակ։ Տիկինը չկա՞յ, տիկինը անհետ եղած էր. խեղճ աղախինը կը շփոթի, վեր վար կը նայի, և վար նայած ատենն ի՞նչ տեսնէ աղէկ. նոյն պահուն այդ տունն այցելող կնոջ մը կօշիկներն անհետ եղած էին։

Պարկեշտափայլ տիկինը, որ կերեւի թէ մէկուն տունն այցելելուն՝ կուզեր անկեց յիշատակ մը ունենալ բոլի, այդ խե՛ղճ կօշիկներն յարմար դատած էր տանիլ։

ԵՂԵՌՆԱԴԱՏ ատեանը, կ՚ըսէ «Հագիգաթ», ի մօտոյ պիտի դատէ հելլէնացի Բանայօթ անուն մարդ մը, որուն կարասիները մաքսատան մէջ քննուելու պահուն վնասակար գրքեր և այլն գտնուած են։

ՀՐԴԵՀՆԵՐ.—Երէկ գիշեր ժամ 3½ ին Սկիւտարի Իճատիյէ Թաղը Սըվաճը Մուրաթ փողոցին մէջ փայտաշէն տունէ մը հրդեհ ծագելով երեք տուներ այրեցան, որոց մին ապահովագրեալ էր։

Միեւնոյն ժամուն ի Գուլէ-գաբու քարուկիր տունէ մը, ուր առաջ վաճառամբաւ կանայք կը բնակէին և որ մէկ քանի օրէ ի վեր պարապ էր, հրդեհ ծագելով այրեցաւ ինչպէս նաեւ տակը գտնուած խանութ մը։ Շէնքը 1200 ոսկւոյ ապահովագրուած էր «Ֆօնֆիանս» ընկերութեան, իսկ ներքեւի խանութին ապրանքներն ալ՝ 1100 ոսկւոյ՝ «Իթալիա» ընկերութեան։

Երէկ գիշեր ի Թարապիա ծովեզերեայ տուն մը այրեցաւ։

ԲԱՂԷՇԻ կեդրոնական ընդհանուր դատախազի օգնական Իհսան պէյ, կ՚ըսէ «Սաատէթ», օրինաց հակառակ ընթացից մէջ գտնուած ըլլալով, դատաստանի պիտի ենթարկուի։

ՈՂՈՂՈՒՄ.—Ծերը Մուսթաֆա Փաշայէն կը գրեն թէ տեղացած յորդառատ անձրեւներէն գիւղաքաղաքին մէջտեղէն անցնող գետն յորդելով շրջակայ տուները ողողուեր են, սակայն մարդու կորուստ չէ պատահած։

ԱԶԴ
ՕՍՄ. ՀԱՆՐ. ՊԱՐՏՈՒՑ

Արեւելեան երկաթուղեաց վիճակահանութեան պարտատոմսեր ունեցողներուն կը ծանուցուի թէ 1299 Մուհարէմի հրովարտակին տրամադրութեան համաձայն, յիշեալ պարտատոմսերուն 12էն մինչև 23 թիւ կտրոններու գումարը կը գտնուի օսմ. հանր. պարտուց զեղչեալ դրամագլուխին մէջ և 24էն 45 թիւ կտրոններու գումարն ալ վճարուած չըլլալով, հրովարտակին ԺԳ. յօդուածին համաձայն՝ Ելմտական նախարարութիւնը, օսմ. հանրային պարտուց վարչութեան հետ համաձայնելէ ետք, որոշած է թէ 12էն մինչև 45 թիւը կրող կտրոններուն ջնջուած թերթը այժմ չպիտի ներկայացուի նոր թերթի մը փոխարէն եւ թէ յիշեալ պարտաթուղթերը ըստ առաջնոյն վաճառելի և արժէքաւոր պիտի ըլլան, եթէ պարգեւը շահուած է կամ ջնջուած։

Կ. Պոլիս 24/5 յունվ. 93

ԱԶԴ

Օսմ. հանրային պարտուց Թոթեւալ հասութից վարչութիւնը մէկ կամ առ առաւելն երկու տարուան վարձակալութեան կը դնէ Միհոֆիթիյի, Հօրաի և Բօժաի ձկնորսութեան տուրքերը։

Այս աճուրդին մասնակցիլ փափագողներ պէտք է դիմեն օսմ. հանրային պարտուց կեդրոնական հաշուակալութեան որ բոլոր պէտք եղած տեղեկութիւնները պիտի տայ ի մասին այս վարձակալութեան պայմաններուն։

ԸՆԴՀ. ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ
4 յունուար 93 2—3

Հրատարակուեցաւ ՍՐԲՈՒՀԻ ՄԱՅՐԱՊԵՏ ԳԱԼՖԱՅԵԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ ի Գրիգոր Մարգարեանէ, մայրապետին լուսանկար պատկերովը։ Գիրքին հասոյթովը շիրիմ մը պիտի կանգնուի բարեյիշատակ կնոջ գերեզմանին վրայ։ Այս նպատակ գրգիռ մըն է որ ամեն մարդ գնէ սոյն գրքոյկէն։ Կեդրոնատեղին է Զարդարեան գրատունը, կը գտնուի նաեւ ամեն գրավաճառաց քով։ Որբանոցին կնիքը չկրող օրինակներն անվաւեր են։ Գին 5 ղրուշ։ 393 3—20

ՄԵԾԱԴԻՐ ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ
Գունաւոր մաքուր տպագրութեամբ, ամենէն գեղեցիկն իր տեսակին մէջ։ 12 ամիսներու մէջտեղ դրուած է պլօք մը ամեն ազգի տօնականներով, կը տեսնուին իսկոյն ամեն ազգաց տօները։
Պարտիզպանեան քով, Րիզա փաշա խան, Պոլիս, Վրոյր եւ ընկ. Թղթավաճառանոցն Քոմիսիոն խան, Կալաթա։ 386 5—12

ՀԵՌԱԳԻՐ

ՓԱՐԻԶ, 7 Յունուար.—Հարցաքննիչ դատաւորն որոշեց դատի ենթարկել հանրային շինութեանց նախկին նախարար Պ. Պայհօ, որ գոհացուցիչ բացատրութիւն չէ կրցած տալ կէս միլիոն ֆր. ի չէքի մը նկատմամբ, որ իւր անունը կը կրէ և իրեն վճարուեր է։ Ըստ Սահմանադրութեան, Պ. Պայհօ պիտի դատուի Ծերակոյտին մէջ, որ այս առթիւ դատական բարձրագոյն ատենի պիտի վերածուի։

—Քրէտի Լիօնէի պաշտօնեայ Պ. Պլոնտէն, որ ձերբակալեցաւ, Պ. Պայհօյի դիւանին մէջ պաշտօն ունէր անոր նախարարութեան միջոցին, և իրեն դէմ ամբաստանութիւնն այս է թէ Պ. Պ. Առթօնի, Ռէյնաքի և Խորհրդարանի մի քանի անդամոց մէջ միջնորդի դերը կատարած է։

—Պ. Անտրիէօ բացարձակ կը հերքէ այն լուր թէ անծանօթ անձն որոյ անունը տալ չուզեր, իբրեւ բարձրաստիճան անձ մը որ դրամ ընդուներ է Բանամայէ, Պերլինի այժմեան ֆրանսական դեսպան Պ. Հէրպէթ է եղեր։

—Կօլուա օրլէանեան թերթը կ՚ըսէ Պ. տը Ֆրէյսինէի գործառնութեանց վրայ, թէ Պ. Քօռնէլիուս Հէրցի սեղանաւորական գործերը պաշտպաներ է Արմատականաց համակրութեամբ։ Խնդիրն երկաթուղւոյ կառախմբոց սանձի մը վրայ է, որ պատերազմի ժամանակ կրնար գործածուիլ։

—Խորհրդարանի անդամք ապահով կը նկատեն Պ. Ֆլօքէի վերընտրութիւնն իբրև նախագահ Երեսփ. Ժողովոյ։

ՓԱՐԻԶ.—Ֆրանսական Ռանթերու ծանր անկման պատճառաւ, հաշուեյարդարութիւնը դժուար եղաւ Փարիզի հրապարակին վրայ։ Ռանթն, որ Դեկտ. 8 ին (Ն. Տ.) 100ն ալ անցած էր 2½ սանթիմ, այս հինգշաբթի 94.15 էր միայն, իբր 6 ֆր. ի անկում։ Անկումն ըստ մեծի մասին վերջին 10 աւուրց մէջ պատահելով, գործոց շփոթութիւն պատճառած է մեծապէս։ Բովանդակ հրապարակը գէշ ցնցուած է։ (Ըստ նորագոյն լրոց, Փարիզի հրապարակը շտկուելու վրայ է։ Լոնտոնի հրապարակն այնքան չէր ցնցուած, թէեւ ի Փարիզ անկումն ընդհանուր եղած էր գրեթէ։ Փարիզի հրապարակին վիճակը Ղալաթիոյ Սակարանին մէջ ևս իւր տկարացուցիչ ազդեցութիւնն ունեցած է։)

ՓԷՇԹԱ.—Հունգարական 5 % արժէթուղթերը 4 % ի վերածելու պայմանագիրը կնքուեցաւ Հունգարիոյ կառավարութեան և Ռոչիլտեան խմբակին մէջ, որ 100 ին 91 էն կ՚ընդունի 500 միլիոն քուաոնի նոր արժէթուղթ, մնացեալին համար իւր գնելու ազատութիւնը պահելով։ (Մէկ քուաոն, աւստրէ-հունգարական նորահատ դրամ, հաւասար է 1 ֆր. 5 սանթիմի։)

ՄԱՏՐԻՏ.—Ազատական Պ. Սակասթայի նախարարութեան կազմութեան վրայ, խնամակալ Քրիստինէ Թագուհին ստորագրեց հրամանագիր մը, որով արդի Երեսփ. Ժողովը կը լուծուի և նոր Ժողովոյ մ՚ընտրութիւնը կը հրամայուի։

ԱԹԷՆՔ.—Ֆրանսական դեսպան Մոնթոլոն կոմս Յունաստանի Թագաւորին որդի Նորկիոս իշխանին յանձնեց Պատուոյ Լէգէոնի մեծ-խաչը՝ Պ. Քառնոյի ինքնագիր մէկ նամակաւ։

ՓԵՏԵՐՍՊՈՒՐԿ.—Նովոյէ Վրէմիա կը յայտարարէ թէ դատ պիտի բանայ այն անձին դէմ որ ըսած էր թէ այս ռուս թերթ, Բանամայի ընկերութենէն կէս միլիոն ֆր. ընդունած ըլլայ Պ. Ֆլոքէի միջնորդութեամբ։

—Ռուսիոյ արտասովոր ելմտացոյցն 1893 տարւոյ՝ 81 միլիոն րուպլիէ կը բաղկանայ։ Սոյն գումարի մեծագոյն մասն յատկացեալ է երկաթուղեաց շինութեան։ Լրագիրք կ՚ըսեն թէ 1892ի ռուսական սովորական ելմտացոյցն 25 միլիոն րուպլի և արտասովոր ելմտացոյցն 74½ միլիոն րուպլի բաց ցուցած է։

ԹԱՆՃԷՐ.—Անգլ. դեսպանը ծանուցագիր մը ներկայացնելով Մարոքի կառավարութեան, անմիջական գոհացում պահանջեց, որովհետեւ մարոքեան ոստիկանութիւնն հրացան պարպած է Ճիպրալթարի անգլ. նաւատակաց վրայ։ Բայց անհիմն է այն լուր թէ Տէրութեանց ներկայացուցիչք հաւաքական պահանջում մ՚ըրեր են։

Սակարան

ՂԱԼԱԹԻԱ, 28 Դեկտեմբեր

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնտրայի վրայ	110 %
3 » Փարիզի — »	22 75

ՕՍՄԱՆԵԱՆ ՔՈՆՍՕԼԻՏԷ

Երէկ երեկոյ գոց. [Միաց. Դ. Սէրի]		23 10
Բերայի մէջ	»	— —
Առաւօտուն բացուեցաւ	»	22 1
Կէս օրին		22 39
Թանզիմաթը Օսմանիյէ երէկ երեկոյ		— —
» ժամ 5ին		— —

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Փոխառ. Միւն	Սէրի	55
»	»	30 ¼
»	Ր »	23 10

ԲԱԺՆԵՏՈՄՍՔ

Սոսիէթէ ժէնէրալ	Անգլ. Լր.	5 10
Քրէտի ժէնէրալ	» »	8 06
Պանք տը Բօնս.	» »	5 08
Սօս. Շանմ է փայէօր	» »	4 26
Րէժի	» »	15 32
Թրամուէյ	» »	635
Բուլղէրի երկաթուղի	Ֆր.	85 75
Բաժնեթուղթ Լաւրիօնի		78

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

Օսմանեան ոսկի	ղրշ.	100
20 ֆրանքնոց	»	87 38
Անգլիական ոսկի	»	110 21
Մարք (Գերմանական ոսկի)	»	107 25
Իմբէրիալ	»	90
Քրիմից	»	51 20
Բուլալ Թղթադրամ	»	9 07
Մէճ. արծաթ (տուրք.)	»	107 36
Մանր արծաթ	»	103 20
Մէթալիք	»	96
Թասֆիյէ	»	— —
Տոկոս Ղալաթիոյ Սակարանի	»	6

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

ՓԱՐԻԶ, 7 Յունուար	
Ֆրանսական Ռանթ 3 %	94 15
» » 4 ½ %	105 37½
Օսմանեան քոնսօլիտէ Սէրի Դ.	21 10
Օսմ. մաքս. արժեթուղթ	464 37½
Բրիօրիթէ Թիւքը (1890)	421 25
Օսմանեան երկաթուղի	86 25
» Րէժիի բաժնեթուղթ	352 50
Պանք Օթօման	561 25
Քրէտի Լիօնէ	732 50
Իտալական Ռանթ 5 %	— —
Եգիպտական միացեալ	495
Ջէք Լոնտոնայի վրայ	25 12
Օսմանիյէ Օսմանեան քոնսօլիտէ	359 37½

ԼՈՆՏՈՆ, 7	
Անգլ. քոնսօլիտէ	97 93
Օսմ. » Սէրի Դ.	20 67
» » » Ա.	55
» » » Բ.	30 ¼
» » » Դ.	21 ⅜
Օսմ. փոխառութիւն 1871	97
Փոխառութիւն 1877 (Տէֆանս Լօն)	94 ¼
Պանք Օթօման	12 ¼
Այտընի երկաթուղի	19
Գասապայի երկաթուղի	11 ½
Եգիպտական միացեալ ունիֆիյէ	98 ¾
» առանձ. բրիվիլէժիէ 1890	103 ⅜
Տօմանիալ (փոխառ. Ռոչիլտ)	103 ¼
Փոխանակութիւն Փարիզի վրայ	25 312

ՎԻԵՆՆԱ, 7	
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	120 95
» Փարիզի »	47 97
Յամանեան Րէժիի բաժնեթուղթ	166 75
» Երկաթուղի	44 20

ՊԵՐԼԻՆ, 7	
Օսմանեան երկաթուղի	88 70
Օսմ. Րէժի	176
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	20 290
» Փարիզի »	80 75

ՀԱՅ ՄԱՄՈՒԼՆ

Ի ՊՈԼԻՍ

Վերջին 20-25 տարիներու մէջ մեր Պոլսոյ ազգայինք լրագրական տեսակէտով զգալի յառաջդիմութիւններ ըրած են։ Իրողութիւն մ'է այս բացայայտ և անժխտելի, որու մանրամասն պարագայներն առիթ ունեցանք ի մօտոյ դիտել և ուսումնասիրել մեր այս տարուան (1892) ի Պոլիս ուղեւորութեան միջոցին։

Մայրաքաղաքի հայ մամուլն ամէնօրեայ թերթեր կ'արտադրէ այսօր, երեւոյթ մ'որ ինչպէս յայտնի է մասաւորապէս զարգացեալ ընկերութեան մը մէջ միայն կարելի է տեսնել։ Լրագրութիւնը Պոլսոյ Հայոց մտաւոր և հասարակային կենաց անհրաժեշտ պայմաններէ մին դարձած է ստուգապէս։ Նա սկսած է գնահատել օրագիրը եւ ամեն օր ստակ տալ անոր՝ ինչպէս կուտայ հացի ու մսի, ամեն քաղաքակիրթ ժողովուրդներու այս մտաւորական պէտքն՝ այս բնական ծարաւն ինքն եւս զգալով։

Ասկէ քանի մը տասնեակ տարիներ յառաջ հայ պարբերական մամուլն ի Պոլիս ո՛չ այս առօրեութիւնն ունէր և ոչ այն կարեւորութիւնն՝ զոր գտած է հիմայ։ Եթէ ստոյգ է թէ Նախորդ սերունդը ունէր ու կը կարդար թերթեր գրեթէ հիմակուան թուով, ոչ նուազ ճշմարիտ է թէ ամէնօրեայ թերթի մը հրատարակութեան գաղափարն իսկ իբր անուրջ, անիրականալի կրնար նկատուիլ մեզ համար։ Եւ իրօք ո՞վ կը հաւատար այն ժամանակ թէ պիտի գար օր, պիտի գար ատեն— և այս ոչ հեռաւոր ապագայի մը մէջ— ուր հայ օրագրութիւնը զարգացման այս աստիճանին հասնէր։ Ամենէ յաճախ երեւցող, ամենէ աւելի կարեւորութիւն վայելող թերթը շաբաթական էր միայն։ Շաբաթական հրատարակութիւնը ամենամեծ յառաջդիմութիւնը կը ներկայացնէր ասկէ շուրջ 30 տարի յառաջ. ժամանակամիջոց՝ զոր արդէն իսկ մեր լրագրութեան անցեալ ժամանակները կրնանք անուանել։ Խաթիճեանի աւանդական Մասիսը որ 1852 թուականէն կը հրատարակուէր՝ իր երկար տեւողութեան մէջ ոչ սակայն նուաստելով աշխարհիկ լեզուի զարգացման, ամեն շաբաթ անգամ մը կ'երեւար լրագրական հրապարակի վրայ, վեց օր անընդհատ լուռ մնալէ ետք։ Հայոց [illegible] թերթը՝ [illegible] տասն ու հինգ օրն անգամ մը կը հրատարակուէր միայն։

Մամլոյ ինչ զգալի յառաջդիմութիւն քառորդ դարու մը մէջ։

* *

Մանզումէի Էֆքեարի ծեր խմբագիրը Կարապետ Փանոսեան, որ առաջագոյն Մէճմուայի Հավատիս և Վարաքայի Հավատիս թերթերը կը հրատարակէր, իր մի այլ լրագիրն օրական ընելու առաջին խորհուրդը յղացաւ ու գործադրեց։

1866 թուականին էր այն։ Շատերու յանդուգն և անապագայ երեւցաւ ի սկզբան ձեռներէց խմբագրին այս փորձն որ սակայն բոլոր յոռետես գուշակութեանց հակառակ իր ընթացքը շարունակեց անարգել։ Այս խրախուսիչ օրինակէն համարձակութիւն առաւ Նաեւ Մասիսը։ Տարի մը վերջը, այսինքն 1867 ին Խաթիճեան սկսաւ պզտի օրաթերթեր հրատարակել, մինչդեռ՝ ինչպէս կը յիշենք՝ բուն Մասիսը շաբաթը երեք անգամ ի լոյս կ'ընծայուէր։ Վաղեմի ծանօթ խմբագիրը 1876-ին Րուզնամէի Մասիս անուն օրաթերթը հիմնելէ ետքը՝ որ երկու տարի կեանք ունեցաւ, հուսկ ուրեմն 1878ին բուն իսկ Մասիսն օրաթերթի վերածելու որոշումն ըրաւ, հասկնալով թէ իր թերթը զարգացման նոր շրջանի մը համապատասխան գրիչ մէջ պէտք էր գտնուիլ եւեթ չէր ուզեր որ իր նշանակութիւնը կորսնցնէր այն։ Արդէն լուրջ և բեղմնաւոր գրիչ մը հրապարակը [illegible] էր բանել Նշանաւոր կերպիւ։ Օգսէն Խօճասարեան 1870էն այսինքն օրական Մասիսէ ութ տարի յառաջ հիմնած էր իր ամենօրեայ Օրագիրը, որու պիտի յաջորդէին 1876ին՝ յիշեալ հրապարակագրի [illegible], և տարի մը ետքը Նոր Դարը։ Խօճասարեանի հրատարակութիւնք լուրջ նկարագիր մը ունէին և յաջողապէս կը մրցէին Մասիսի դէմ։

* *

Օրինակը տրուած էր այլ ևս, և կը մնար անոր հետեւիլ միայն։ Ալիք Էֆէնտիէ 1877ին սկսած օրական Թէրճիմանը Էֆքեարը չորս ամիս վերջը Տ. Ճիվէլեկեանի ձեռքով կը շարունակուի մինչեւ 1875, եւ այդ թուականէն սկսեալ այս վերջինի ձեռամբ կը խմբագրուի ցայսօր։ Ճէրիտէն սահմանուած էր Մանզումէի հետ՝ մեծ մասամբ թրքախօս հայազգիներու քով այն հրահանգիչ պաշտօնին՝ զոր կը կատարէին Օրագիր Մասիս և այլք իրենց մայրենի լեզուն գիտցող ազգայիններու մէջ։ Չը մոռնանք Նաեւ Մէճմուայի Ախպար օրաթերթը Նախ Էնֆիէճեան Գրիգոր վարդապետի եւ հիմայ Թօսլեանի խմբագրութեամբ հրատարակուած։

* *

Օրական Մասիսէ յաջորդեց 1884ին օրական Արեւելք, քանի մը յարգի երիտասարդներէ կազմեալ վարչական խորհրդոյ մը տնօրինութեան ներքեւ և աւելի ընդարձակ ձեւով։ Մամուլի յառաջդիմութիւնն աւելի չեշտուած էր մայրաքաղաքի ազգայիններու մէջ։ Եւ հայոց ամենէ մեծ օրաթերթը՝ խմբագրապետ Բ. Քէչեանի և գործակցութեամբ Տ. Արփիարեանի, իր յաջող ընթացքը կը շարունակէ ցայսօր իր հիմանց վրայ հետզհետէ ամրապնդ հաստատուելով։

Օգսէնի մահուամբ իր թերթը երկար տարիներէ հետէ դադրած ըլլալով՝ Արեւելք մինակ կը մնար ասպարէզի վրայ։ Եւ մինչեւ Մասիս իր շաբաթական հրատարակութեան մէջ կը շարունակէր կանոնաւոր յարատեւութեամբ, 1891ին ամենօրեայ նոր լրագիր մ'ահա կը ծագէր, Հայրենիք՝ որուն Արեւելքի մեծատարած ծաւալն ունենալու, կարծես ի փոխարինութիւն կիրակի եւ տօն օրերն ալ երեւալու եւրոպական այլ ոյժ գործունէութիւնը կը ցուցնէ, հայ օրագրութեան մէջ նո՛ր և եզական երեւոյթ։ Այս թերթը՝ որու խմբագրապետն է Ա. Արփիարեան՝ գործակցութեամբ Լ. Բաշալեանի, կը մրցի Արեւելքի հետ, անանկ որ այս երկու կարեւոր թերթերն են որ Արեւմտեան Հայոց պարբերական ասպարէզը կը գրաւեն այսօր Նշանաւոր կերպիւ։ Տարբեր ուղղութեամբ, տարբեր տեսակէտով խմբագրուած՝ այս մրցորդ երկու լրագիրք իրական ծառայութիւններ կը մատուցանեն հանրութեան, որու համար արժանի շնորհակալութեանց են։ Միւս կողմէ Ճէրիտէ իր ընթացքը կը շարունակէ յաջողութեամբ, զուգընթացաբար Մանզումէին հետ որ թէեւ փոքր ինչ տկարացած այս վերջին տարիներս, սկսած է սակայն նոր ոյժերով և կարի յաջողութեամբ հրապարակ ելլել։

* *

Երբ Պոլսոյ հայ օրագրութեան վրայ կը խօսինք, կը պարտաւորինք հատուած մ'ալ նուիրել պարբերական հանդէսներու՝ զորս այսօր կը ներկայացնեն շաբաթական Մասիսը՝ խմբագրութեամբ Փալազաշեանի եւ հանդէսի վերածուած Մասիսը՝ որ 1884էն մինչեւ 1891 Արեւելքի խմբագրութեան կողմէ շաբաթն անգամ մը հրատարակուելէ ետք՝ այսօր իբրեւ քսանօրեայ պարբերական կը խմբագրուի Գ. Զօհրապի և Հ. Ասատուրի ձեռամբ։ Մասիս բաւական մեծ ընդունելութիւն գտած կ'երեւի ազգին մէջ, և գոհունակութեամբ կ'իմանանք թէ քիչ ատենէն շաբաթական պիտի դառնայ, ինչ որ իր կարեւորութիւնը և սպասումը՝ որ արդէն բաւական մեծ է, պիտի աւելցնէ հարկաւ գրական ասպարէզի վրայ։

ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ

Իզմիր (Շարունակելի)

ԻՇԽԱՆԱՑ ԿՂԶԻՔ

Բ.

Իշխանաց անուամբ կղզիները եւ կղզեակներն եօթն են, Բիւթանիոյ ծովեզերքին դիմաց զուգահեռական ուղղութեամբ, որք թէ ընդարձակութեամբ և թէ կարեւորութեամբ իրարմէ շատ մեծ տարբերութիւն ունին։ Հար. արեւմտքէն հիւս. արեւելք ուղղութեամբ շարուած են, Բրօդի (Գնալը), Անդիկոնի (Պուրղաս), Բիդիա, Հալքի կամ Խալքի (Հէյպէլի), Բրինքիբօ (Պէօյիւք Ատա), Անդէրովիդոս և Նիանտրօ։ Երկու ուրիշ կղզեակք եւս կան, Բյաթէ և Օգսիա, աւելի արեւմտեան կողմն բաց ծովուն վրայ, և կրնան այս արշիպեղագոսին մասն սեպուիլ։

Բրինքիբօյն ամենէն զարդարունը և այս կղզեաց չքեղագոյնը կրնայ ըսուիլ։ Այս կղզւոյս քաղաքը, Բերայի և Ֆէնէրի, կ. Պոլսոյ արուարձանաց, յոյն և հայազգի վաճառականաց և սեղանաւորաց դասուն ամարանոցներովը զարդարուած է, եւ մեծագոյն մասն Մաճառ. բլուած ծառուղւոյն վրայ է, և միւս կղզեաց ծովուն վրայ սքանչելի տեսարան մը ունի։ Կղզւոյս սօճեաց գեղեցիկ անտառներն, հիանալի տեսակէտներն, մանաւանդ Սուրբ Գէորգ (Այիեօրկի) վանքին տեսարանը, որ կղզւոյս բարձրագոյն կէտն է, բոլոր արեւելից մէջ անուանի եղած են։ Վերջը կուգայ Հալքի որ հիմակ ալ անուանի է իր գեղեցիկ վանքերուն համար։ Նաեւ հիանալի է իր եզերացը փոփոխակի տեսարաններովը, ծոցերուն գեղեցկութեամբը և ընդարձակ հովանաւոր ծառերովը։ Որչափ այս երկու մեծ կղզիները այս արշիպեղագոսին գեղեցկութեան համբաւն հանած են իրենց կանաչութեամբը և անտառներովը, այնչափ ալ Բրօդի և Անդէրովիթօս (կամ Դէրէպէնդօս Սէտէֆ ատասը) մերկ են և քարուտ։ Անդիկոնի որ շատ տարիներէ ի վեր ծառերն կորսնցուցած էր, մեր օրերը տնկեալ նոր անտառներով կը ծածկուի իրեն արեւելեան զառիվերին վրայ։ Իսկ Բիդիա եւ Նիանտրօ միայն պարզ ժայռեր են, եւ ամենեւին գեղեցկութիւն կամ կարեւորութիւն չունին։

Իշխանի կղզեաց արշիպեղագոսը հիմակ գրեթէ միայն զուարճութեան տեղ մը եղած է։ Ամառը երբ հարաւային հովը կը փչէ, օդը աւելի տաք կ'ընէ քան թէ Վոսփորի գիւղերն, որք Սեւ ծովէն փչող հովերէ և ծովուն ջրոյ ընթացքէն միակերպ ախորժելի զովութիւն մը ունին, անոր համար այս կղզիներս աւելի գարնան եւ աշնան յաճախեալ են։

Ինչպէս առաջ՝ հիմակ ալ սովորութիւն է որ Բերայի շատ մեծ ընտանիք մայիս ամսոյն քանի մը շաբաթները կղզին կ'անցընեն, Ենիքէօյ, Թարաբիա կամ Պէօյիւք-Տէրէ ամառը հաստատուելէն առաջ։ Բրինքիբօ աղէկ իջեւաններ ունի, օդը շատ մաքուր է, ցուրտը քիչ զգալի, բաղնիք սիրողները կ'ըսեն թէ ամէն տեղէ աւելի այս կղզւոյս ծովուն ջրերն նախադասելի են։ Այս պատճառաւ, նաեւ գրեթէ գեղեցկութիւնը, հիանալի տեսարանը և հաղորդակցութեանց ալ դիւրութիւնը (մէկ ժամ պէտք է կղզիէն Ստամպօլ երթալու, և օրը քանի մը անգամ շոգենաւերն կ'երթեւեկեն) այս կղզերս շատ յաճախելի կ'ըլլան։ Բերայի փրանկները կղզին շատ կ'երթան, մանաւանդ Գաղղիացիք, Անգլիացիք։ Ոմանք ամարանոց ունին, մանաւանդ այս վերջի տարիներս, բարձր ընտանիքներ, որ բոլոր ամառը այս կղզիներս կ'անցընեն։

Աւելի չափաւոր վիճակ ունեցողք ալ կիրակի և տօն օրերը կուգան իրենց ընտանիքովը։ Այս միօրեայ հիւրերն, և անոնք որ ոչ ամարանոց և ոչ բարեկամ տուներ ունին, Վոսփորի վրայ աւելի այս կղզիները պտըտելու կ'երթան։

Կիրակիները շատ բազմութիւն կ'ըլլայ մեծ կղզին, իջեւանները լեցուն են հիւրերով, Նոյնպէս զարդարուն պատշգամներն, ուսկից արք և կանայք գեղեցիկ տեսարաններ կը վայելեն, Ասիոյ ծովեզերաց և նոյն ծոցին վրայ՝ ուր մեծ ու պզտիկ շոգենաւուց երթեւեկութիւնը և երաժշտութեանց ձայնը ձգիչ հրապոյրք մ'են, ծովուն եզերքը ցիցերու վրայ շինուած սրճանոցներուն մէջ։ Միօրեայ շրջագայողաց ոմանք կղզւոյն ներսերը կը մտնան, և ամէն մէկ ծառի խումբ մը գիւղական սեղանատուն մը կը դառնայ։

Հալքի, Անդիկոնի և Բրօդի, միջակ մարդկանց տեղերն են. տօնի օրերը փայտաշէն տուները, որք կղզեաց բլուրներուն վրայ աստիճանաբար շինուած են, կը լեցուին բնակչաց ազգականներովն եւ բարեկամներովն, որ կուգան քանի մը ժամ, փախչելով Բանկալթի և Բերայի մեծ փողոցին կիզիչ փոշիներէն կամ Կալաթիոյ նեղ, անել եւ տաղտկալի ճամբաներուն մէջի գրասենեակներէն, որոնց շատը հին Ճենովացւոց ժամանակէ մնացած խաներու մէջ են։

Այս է ահաւասիկ բնութեան ամէն սքանչելեօք զարդարեալ կղզեաց արդի վիճակը։ Հին ատենը կղզեաց տեսարանը արդի ժամանակին չէր նմաներ, այնչափ լուռ և միայնութիւն էր այն ժամանակ գեղածիծաղ ծովուն մէջտեղը, որչափ հիմայ զուարթ և կենդանի է։ Սօճեաց ընդարձակ անտառներ, մրտեններ և բեւեկնենաց թաւուտք, որոնց մնացորդը դեռ եւս կը ծածկեն Բրինքիբոյի և Խալքիի բլուրներուն զառէջքը, յայնժամ կանաչ միաձեւ վերարկուի մը պէս բոլոր կղզիներն կը պատէին։ Տեղ տեղ կանաչութեանց մէջ բաց տեղուանք կը տեսնուէին, քանի մը վանքեր, որ ցած և տաանց ճարտարապետութեան շէնքեր էին։ Այս սրբազան շէնքերն խումբ մըն էին եկեղեցեաց, աղօթատեղեաց և մատրանց, վանահայրց և կրօնաւորաց բնակութեան մօտ։ Կային նաեւ առանձնական խցիկներ ճգնաւորաց։ Ասոնց բոլորտիքը քանի մը մշակեալ դաշտեր ալ կային վանքերու սեփական։ Աղքատ վանականք իրենք կը բանեցնէին իրենց դաշտերը, իսկ հարուստ վանքերը վարձուորաց կամ գեղացիներու կը յանձնէին, որ վանքերուն մշակներն էին։

Իսկ չմշակուած տեղուանք՝ ուր հողագործին բահն դպած չէր, սօճեաց, մրտենեաց և այլ և այլ հոտաւէտ թուփերու անտառներով ծածկուած էին։ Ծովեզերաց մանր խորշերուն մէջ, որք պզտիկ նաւահանգիստներ էին, միայն քանի մը խեղճ բնակարաններ կային նաւավարաց, խանութպաններու որոնք վանքերուն ուտելիքն կը հոգային։ Կարելի է որ այն ատենէն սկսած էին զուարճութեան տեղ մը ըլլալ, ուր կերուխում սիրող մարդիկ կը յաճախէին, ծով մտնելու, երբեմն ալ անուանի ճգնաւորաց այցելութիւն մը տալու համար։ Այս խեղճուկ խրճիթներն են, ճշմարիտ նաւահանգիստ կղզեաց, որ սկիզբն եղած են հիմակուան զարդարուն ամարանոցաց։ (ԲԱԶՄԱՎԷՊ)

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Վերջացող շաբաթը՝ լատինական և յունական տօներուն պատճառաւ առեւտրական նշանակելի գործողութիւն մը ցոյց չի տար։

200 քիլէ կարմիր ցորեն հասաւ շաբթուս մէջ և վաճառուեցաւ նուազ հաստատ գիներով։ Շաբթուս մէջ հասնող 20.000 քիլէ կակուղ ցորենը վաճառեցաւ։ Կիրքա և ազիմա ցորեններէն ոչ հասաւ ոչ վաճառուեցաւ։

250.000 օխա եգիպտացորեն վաճառեցաւ՝ օխան 19 փարաի և 2000 քիլէ գարի քիլէն 10—10½ ղրուշի։ Թէև հաճար կայ, բայց գնող չկայ։ Վարսակի վրայ ալ գործերը դադրած են։ Իսկ շաբթուս մէջ հասնող 8000 պարկ ալիւրը մասամբ ծախուեցաւ։

Ամենեւին գործ չեղաւ լուբիայի, սիսեռի, բակլայի, կանեփի հունտի, խաշխաշի, բամբակի և կորեկի վրայ։

350 պարկ սուսամ՝ որուն հարիւրը տեղական և 250ը Եւրոպայի սպառման համար, վաճառուեցաւ, առաջինին օխան 87—88 փարաի և երկրորդինը 82—83 փարայի։ Ասկից զատ վաճառուեցաւ 680 պարկ վուշի հունտ՝ օխան 49էն 50 փարայ։

Արտադրութեան մեր գլխաւոր նիւթերէն դեղին հունտի վրայ առուտուր չեղաւ, 300 հակ թիֆթիկ ծախուեցաւ օխան 14—15¼ ղրուշէն։ Ընթացիկ գործեր գորգի վրայ։ Աֆիոն վաճառուեցաւ 32 սնտուկ, որուն 7 սնտուկը Թօքաթի, նոր հունձք, թէլքէլ, 130 ղրշ. ի, 21ը Մալաթիայի, Զիլէի, Եօզկաթի, Գայսերիի, հին հունձք 123էն 126 ղրշ. ի և 4 սնտուկը Պալըքեսէրի՝ նոր հունձք, թէլքէլ, օխան 110 ղրուշի։

Նոյնպէս վաճառուեցաւ 64 պարկ գազի խէժ, որուն 33ը Էնկիւրիի, Նիկտէի բօպիտակ տեսակ, 27էն 28 ղրշ. 37 Գայսերիի, Քալայճըքի, սպիտակ և բնական, 25էն 27ի և 4 Էնկիւրիի, դեղին, օխան 15էն 17 ղրշ։

Շաբթուս մէջ հասնող 30 տակառ Ուլատոֆքայի և 15 տակառ հունգարական ալբօլի վրայ քանի մը փոքր վաճառումներ եղան։

Գաղթաբերքերէն շաբթուս մէջ հասնող 4700 պարկ շաքար, զանազան տեղերէ եկած, վաճառուեցաւ 115—121 ղրշ., ըստ մաքրայի և արժէքի։ Թէեւ 200 պարկ խահվէ եկած էր, սակայն 600 պարկ խահուէ վաճառուեցաւ, 100 օխան 12.50—14 օսմ. ոսկի։

Ճաբոնական բրինձ ոչ եկաւ ոչ ծախուեցաւ։ 1500 պարկ ռանկունի բրինձ վաճառեցաւ, ուսկից ա'լ չի բերուիր. 112 ղրուշի գին կը տրուի։ Մոմերու և քարիւղի վրայ սովորական գործառնութիւնք։

(Առեւտրական Լրաբեր)

ՆՈՐԱՎԷՊ

ԲԱԿԱՆԻՆԻԻ ԿԱՌՔԸ

Երեկոյ մը Վիեննայի փողոցներուն մէջ աննպատակ կը թափառէի, —կը պատմէ հռչակաւոր ջութակահարն դիտելով Աւստրիացւոց խարտիշահեր և քաղաքուսի գլուխներն, երբ յանկարծ փոթորիկ մը ծագեցաւ։ Որոտումը կատաղութեամբ կը թնդար, և հեղեղանման կ'անձրեւէր։ Մօտեցայ յաջորդաբար երեք կառքերու, բայց կառապաններն իմ խօսած լեզուս չհասկընալով՝ կը շարունակէին իրենց ընթացքը, և յանձն չէին առնուր իրենց կառաց դռնակը բանալու, սակայն տարափը կը շարունակէր։

Չորրորդ երկանիւ մը անցաւ… այս անգամ, կառավարն իմ լեզուս հասկցաւ։ Իտալացի էր և ճշմարիտ Իտալացի։ Կառքը մտած ատենս ուզեցի գին հարցնել։

—Քանի՞ փիօրին կ'ուզես զիս պանդոկս փոխադրելու համար։

—Հինգ Փիօրին, պատասխանեց մարդը Բականինիի նուագահանդէսներուն մէկ տոմսակին գինն է։

—Անպիտան, կը համարձակի՞ս հինգ փիօրին պահանջել, այնչափ մօտ տեղի մը համար։ Բականինի կրնայ մէկ լարի վրայ միայն նուագել, բայց դուն կրնա՞ս կառքդ մէկ անւոյ վրայ քալեցնել։

—Է՛հ, պարոն, մէկ թելի վրայ նուագելը կարծուածին չափ դժուար չէ։ Այսօր իմ ճամբուս գինը կրկնապատկեցի, որովհետեւ ես ալ երաժիշտ եմ և կը փափագիմ երթալ և Բականինիի կոչուած սա միւս երաժիշտը լսել։

Այլ եւս չսակարկեցի, հինգ վայրկենէն բնակած պանդոկիս դուռը գտնուեցայ, գրպանէս հինգ փիօրին և գրպանակէս տոմսակ մը հանեցի։

—Ա՛ռ, ահա ինծմէ ուզած գումարդ և տոմսակ մըն ալ աւելի, Բականինիի կոչուած սա միւս երաժիշտն երթալ լսելու համար նուագահանդէսին մէջ, զոր վաղը պիտի տայ երաժշտաց սրահին մէջ։

Ստուգիւ հետեւեալ օրն երեկոյեան ժամը ութին, ամբոխը կը խռնէր սրահին դռներուն առջեւ, ուր լսելու կուգային զիս։

Գործակալ մը եկաւ զիս կոչեց և ըսաւ. «Դուրսը մարդ մը եկեր է բաճկոնակով, բաւական գէշ հագուած, բռնի ներս մտնել կ'ուզէ։»

Գործակալին ետեւէն գացի։

Այդ մարդը նախընթաց օրուան կառապանն էր, որ օգտուելով իմ տուած տոմսակէս, կ'ուզէր ներս մտնել։ Հրամայեցի որ ընդունին, և հակառակ իւր բաճկոնակին և գէշ ներկուած կօշիկներուն, մարդս ներս մտցունել տուի խորհելով որ բազմութեան մէջ պիտի կորսուէր ո՛հ, այո՛։ Երբ ներկայացայ բեմին վրայ, առաջին տեսայ կառավարն, որոյ հագուստներն և դէմքը, առջեւը նստող կանանց սիրուն դիմաց և շքեղ արդուզարդուց հետ հակապատկեր մը կը ձեւացունէին, որով մեծ տպաւորութիւն մը յառաջ կուգար։

Յափշտակութեամբ ծափահարեցին զիս, բայց բաճկոնակով մարդը գրեթէ ինծի չափ յաջողութիւն ունեցած էր։ Ձեռքերն իրարու կը զարնէր, (և ի՜նչ ձեռքեր) հասարակ մը մէջտեղ կը գոչէր, երբ ամէն մարդ լռիկ էր (ինքն երաժիշտ չէ՞ր միթէ)։

Իր շարժումներն, աղաղակները, ծափահարութիւններն որք ցնորական կը նմանէին այնքան ուշ կը գրաւէին, որքան հագուստն աւելի ծաղրական էր։

Հետեւեալ օրն արթննալուս լուր տուին թէ մարդ մը հետս խօսիլ կ'ուզէր, անունն ալ չէր տար, և որովհետեւ ուշացայ պատասխանելու, սենեակս մէջ տեսայ նոյն անձն որ նուագահանդէսիս մէջ այնքան զուարթութիւն պատճառած էր։

Բիչ մնաց զանի սանդուխներէն վար նետէի։ Սակայն կեղպարանքն այնքան խոնարհ էր որ քաջութիւն չունեցայ։

—Բարձրապատիւ տէր, ըսաւ ինծ, կուգամ ձենէ խնդրել մեծ, ամենամեծ ծառայութիւն մը··։ Չորս զաւակաց հայր եմ, աղքատ եմ և ձեզ հայրենակից։ Դուք հարուստ էք, անզուգական համբաւ ունիք, եթէ ուզէք կրնաք իմ բաղդս ապահովել։

—Տիավօլօ (սատանայ), ինչ ըսել կ'ուզես, հարցուցի զարմացմամբ։

—Հրաման տուէք ինծ կառքիս ետեւը մեծ գրերով այս երկու բառերը գրելու «Բականինիի կառքը»։

—Ուզածդ գիր, և կորսուէ գնա՛։

Այս մարդը, կը յաւելու Բականինի, ոչ խենթ էր և ոչ պակասամիտ, մի քանի ամսոյ մէջ ճանչցուեցաւ ի Վիեննա, ինծմէ շատ աւելի, և մեծ գումար մը դիզեց։

Երկու տարի յետոյ, Վիեննա վերադարձայ, կառավարն իւր շահած ստակով իմ իջեւանած պանդոկս գնած էր, և կառքն 1000 Անգղիական ոսկւոյ ծախած էր հարուստ Անգղիացւոյ մը։

Թարգմ. ԱՂԵՔՍԱՆԴՐ Գ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
ԼԷՕՆ ԷՍԳԻՐՏԻՒ

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Այր և կին.

Կինը.—Այսպէս գեղեցիկ եղա՞յ։

—Շատ փափաք ունիմ ոչ ըսելու։

—Ինչո՞ւ համար։

—Ամենուն պէս ըսած չըլլալու համար։

* *

—Հօրեղբօրդ բարի լոյս ըսէ։

Տղան.—Ո՛չ, չեմ ըսեր, ինծի շաքար չը բերեր։

* *

—Բայց, անպիտան մարդ, այս ձուկը թարմ չէ···

—Անկարելի է, դեռ այս առաւօտ զըռնեցինք։

* *

Մէկը ծեր դուքս մը կը յանդիմանէր խաղուէն շատ սիրելուն համար։

—Ձեզ պիտի մեռցնէ, ըսաւ, այդքան մի խաղք։

—Ի՞նչ ընեմ, պատասխանեց դուքսը, մեռնելու համար ծնած եմ։

* *

Երկու կին սրահի մը մէջ իրարու կը հանդիպին.

—Այցէն մտքս եկաւ, կ'ըսէ մին, տիկ. Ն…ին հետ հաշտուե՞ր էք։

—Այո, կը պատասխանէ միւսը, գիւղէն դառնալուս այնքան տգեղցած գտայ զինքը որ ա՛լ քէն չը պահեցի հետը։

ՑՈՒՑՔ ԵՒ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ

Պէտք է ընտրել իբրեւ ամուսին այն կինը միայն որ եթէ այր ըլլար՝ պիտի ընտրէինք իբրեւ բարեկամ։

—Փորձութիւնը չարիքն է պատրանաց մէջէն տեսնուած և այս է պատճառը որ զայն այնքան հրապուրիչ կը գտնենք։

—Չեմ սիրեր այն մարդիկը որք երբեք իրենց յանցանքը չեն խոստովանիր և որք միշտ ուրիշ մը անոր պատճառ կը բռնեն։

—Մարդիկ են որ զմեզ սուտ խօսելու կը քաջալերեն, քանի որ չեն ուզեր մեզ հաւատալ երբ ճշմարիտ ըսենք։

—Ոչինչ մեր կրած տառապանքներէն զմեզ կը մխիթարէ, որքան մեր ըրած բարիքը։

—Անձնասիրութիւնը մեր փոքրիկ մեղաց ամենէն դժուար ծածկուողն է։ Տ. Չ.

ԼԱՆՕԼԻՆ
ՔՐԻՄ ՏԸ ԹՈՒԱԼԷԹ
ԼԱՆՕԼԻՆ
ԼԱԽԱԳՈՅՆ դարման ընդդէմ այրուածոց կեղեքուածներու։
ԳԵՐԱԶԱՆՑ մորթի պահպանման համար, մանաւանդ մանուկներու մասին, և դոյնի պահպանման։
ԼԱԽԱԳՈՅՆ դարման ընդդէմ մորթի հիւանդութեանց և ընդդէմ արիւնքրթութեանց։
Կը վաճառուի ամէն դեղարաններու եւ դեղօրէից ու անուշահոտութեանց մթերանոցներու մէջ։
Գործակալ եւ ներկայացուցիչ ի Կ. Պոլիս
Մ. Ս. ՖՐԼԷՕՅԼԻ
Կալաթա, Մերթէճեանի փողոց, Դրնաճեանի խան։ 398

ՆԱԽԱԶԴ
ՎԱՐԺԱՊԵՏՔ ԵՒ ՎԱՐԺՈՒՀԻՔ
Ձեր աշակերտաց Նոր Տարւոյ Նուէր տալ կ'ուզէ՞ք
ԿԱՂԱՆԴԻ ԱՌԹԻ
Ոսկեզօծ եւ քարոյալից գիրքը մը, օրացո՞յց մը, պատկերաց հաւաքածո՞յ մը, սիրուն կաղամա՞ր մը, ոսկեփետուր գրի՞չ մը, ներկատո՞ւփ մէ կարկինի տուփ, գեղեցիկ գմելի՞ մը, խաղալի՞կ մը, զբօսական առարկա՞յ մը, քարտէ՞զ մը, ատլա՞ս մը, զարդարուն յուշատետրի՞կ մը, նկարակերտ ալպո՞մ մը, անշուշտ ասոնցմէ մին, բայց ո՞րը։
Գրեցէք մեզ օր առաջ, եւ եթէ կը վարանիք որոշում մը տալու, ընտրութիւնը թողէք մեր ճաշակին. միայն ծանուցէք թէ քանի՞ո՞ց բան մ'է ուզածնիդ եւ շուտ մը կը ղրկուին ձեր ուզած առարկայք։
Մեր հասցէն է, ինչպէս գիտէք, Ս. Դաւթեան, Գազասքեր խան, Պահճէ Գափու, Կ. Պոլիս։
345 7—8

ԱՊԱՌԻԿ ՀԱՅԹԱՅԹՈՒՄ ԳԻՐՔԵՐՈՒ
ՊԱՅՄԱՆՔ ՎԱՃԱՌՄԱՆ
Գիրքերը կը տրուի Փարիզի գնով
100 ֆրանքի և ասկէց պակաս ամէն յանձնարարութեան համար վճարումը պէտք ըլլայ ամսական
ՀԻՆԳ ՖՐԱՆՔ
Փոխադրութեան ծախքը գնողին վրայ է. Մեզ հետ յարաբերութիւն չունեցող անձերէն կը խնդրուի որ երաշխաւորութիւն մը տան տեղւոյս վրայ։
Ա. Տ. ԶՈՒՀՐԱՃԵԱՆ
Ղալաթիա, 10, Խավեար խան, Ղալաթիա 10,
331
5

ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ԱՆՁՐԵՒՆԵՐԸ
Ձմեռուան էն գլխաւոր պէտքերէն մէկն է հովանոցը կամ անձրեւանոցը— ինչպէս որ կ'ուզէք։
Անձրեւին, ձիւնին ու փուքին ժամանակ դիմացկուն— «Բարակոն» եւ ''լորբիպա'',— երկաթներով ամուր շինուած հովանոց մը անշուշտ շատ աւելի կարեւորութիւն ունի քան իւր բուն արժէքը։
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՀՈՎԱՆՈՑՆԵՐ, արանց կանանց, մանչ եւ աղջիկ տղոց համար՝ բամպակէ, բուրդէ, բրդախառն մետաքսէ, եւ զուտ մետաքսէ կերպասներով ու պարզ, զարդարուն, կեռ, կոր, բնական ազմատ, ոսկրէ, եւ արծաթազօծ կոթերով, սիրուն ու ճաշակաւոր, կը ծախուին Ղալաթիա կամուրջին ճիշդ դէմը թիւ 33 հանրածանօթ ''ՓԷՕՇԷ ՊԱՇԸ'' խանութը, ուրկէ տակ տեղ մը, ինչպէս կ'ըսեն, ուր դիմաց էն Նրբաճաշակ անձինք պիտի գտնեն իրենց հաճելի լինելիք հովանոց մը։
Դիմեցէք··· աժան ծախել, շատ ծախել։
Ղալաթիա կամուրջին դէմ թիւ 33, ''Փէօշէ պաշը'' ՄԻՀՐԴԱՏ Վ. ՀԱՅԿԱԶՆ
275

ՆԻՔՕԼԱ ԱՆՏՐԻՈՄԷՆՕ
ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ
Պէյօղլու Գրան Րիւ տը Փէրա Թիւ 99
Պ. Նիքօլա Անտրիոմէնօ այս անգամ Եւրոպայէ բերել տուած է լուսանկարչութեան յատուկ բազմաթիւ նորահնար գործիքներ թէ՛ մեծ և թէ՛ փոքր լուսանկարներու պատրաստութեան համար։ Պ. Նիքօլա Անտրիոմէնօ ինքն անձամբ կը հանէ իրեն դիմող բազմաթիւ յաճախորդաց լուսանկարները։ Իբրեւ ապացոյց իւր կատարեալ յաջողութեան և յաճախորդացը հարկ եղած ապահովութիւնը տալու համար կը ծանուցանէ որ եթէ լուսանկար մը առաջին անգամ չյաջողելով տիրոջը կողմէ մերժուի, պատրաստ է երկրորդ անգամ հանել զայն։ Ո՛վ որ կը փափաքի թէ՛ աժան գնով, թէ շուտ և թէ բնականին նման լուսանկար մը ունենալ կրնայ առիթէն օգուտ քաղելով դիմել Պ. Նիքօլա Անտրիոմէնօի լուսանկարչատունն, ուր ամէն կերպիւ գոհ պիտի մնայ։
Ինչպէս որ յստակ և պայծառ օրերու մէջ, նոյնպէս ամպոտ և մառախլապատ օրերու մէջ եւս լուսանկարք ամենայն յաջողութեամբ պիտի հանուին նոր գիւտերու շնորհիւ։
Զգուշացէ՛ք կարգ մը անձերէ, որք ինքզինքնին իբրեւ լուսանկարիչ կը ներկայացընեն։ 89—90

ՄԻՈԴԻ ՄՕՐՈՒԻ ՁԿԱՆ ՕՇԱՐԱԿ
Եըլտըզ, Կ. Պոլիս, 3 դեկտ. 1883
Պարոնայք Ագոպ և Պօսէն,
Կը ցաւիմ որ պաշտօնական գիրքովս կարող չեմ փորձեր ընել, այլ համաձայն ուրիշներու փորձերուն և այն բժշկաց որոց պաշտօն յանձնեցի փորձել զայն մեր հիւանդանոցաց մէջ, կը յայտարարեմ որ ձեր Մօրիւ ձկան իւղն, իր այդ վիճակին մէջ դիւրաւ խմուելով, և մարսուելով, կը համապատասխանէ այն յատկութեանց զորս ախտաբուժական գիտութիւնն ի վաղուց անտի հաչակած է, մանաւորապէս այդ յաջող պատրաստութեան մէջ.
ՏՐ. Ս. Ս. ՄԱՎՐՈՅԷՆԻ ՓԱՇԱ
Բժիշկ Վ.Ե.Հ. Սուլթանին

ԻԼԱՆ
Պահրը Սիեահ պօղազընտա վագը Մաճար գալասընըն Գավագ գարըսը իթիսալինտէքի ճիպալտէն էնէրէք թէրաքքիւմ իթմիշ օլան 100000 չէքի մըգտարը մօլօզ թաշընըն պէհէր չէքիսի մէճիտիեէ 20 ղրշ. հիսապը իլէ վէ չէրայիթը լազըմէ իլէ 22 քարասա թալիպի էօհտէսինտէ պուլունտուղունտան թարիխը իլանտէն իթիպարէն 8 կիւն սօնրա գարարը գաթիսի վէ իրթէսի կիւնի 100տէ 5 թէմինատ իլէ գապուլ օլընաճաղընտան տալիպ օլանլար վէ բէյ սիւրմէք իսթէյէնլէրին բէյ ագճէլէր իլէ Բուլէքի Գավաղընտա իսթիհքեամ գոմիսեօնընա միւրաճաաթ էյլէմէլէրի իլան օլունուր։
24 քեանունի էվվէլ 308

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգլ. Ոսկի 1,000,000

«ՖԻՆԻՔՍ»,

Հիմնեալ ի Լոնտոն յամին 1782

ՖԻՆԻՔՍ, հիմնեալ առաւել քան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ'է՝ որոյ բաժնետէրք Անգլիոյ ամենահարուստ և համբաւաւոր դրամատէրներ են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն։

ՖԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 18,000,000 Անգլ. ոսկւոյ գումարն զոր ցարդ վճարած է հրդեհի վնասուց համար։ 34

ՖԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծակի կալուածք, կարասիք և ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանօք և միջնորդութեամբ ստորագրելոյս, որք ունին լիազօր իշխանութիւն կարգադրելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած վնասներն։

Հ. ՍՈՒՐԱՆ և ԸՆԿ. ընդհ. գործակալք Կ. Պոլսոյ, Պուլկարիոյ և Սեւ ծովու եզերաց Թիւ 11, և 12։ Մանտալճը խան, Ղալաթիա, Աւստրիական թղթատան վերեւ։

HAMBURG MUNICH UNITED

ՀԱՄՊՈՒՐԿ եւ ՄԻՒՆԻԽ

ՄԻԱՑԵԱԼ

Ա ԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ Ֆռանք 8,000,000
Պահեստի դրամ ցվերջ յունիս 1890 · 6,165,860
Տարեկան հասոյթ · · · · 14,135,925

Ընկերութիւնքս **ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ** կ'ապահովագրեն մթերանոցներ և բնակութիւններ և սոցա մէջ գտնուած վաճառքներ և կարասիներ խիստ չափաւոր սակագնօք.

Լիազօր ներկայացուցիչ Կ. Պոլսոյ

ՖՐԱՆՔՖՕՌԹՈՒԱԶ

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ Ֆռանք **6,250,000**   Պահեստի դրամ Ֆռանք **1,270,300**

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց վրայ բեռցուած վաճառքներ, ինչպէս նաև թղթատարական և փոխադրական ընկերութեանց յանձնուած թանկագին նիւթեր և դրամ պարունակող ծրարներ խիստ նպաստաւոր պայմանօք և սակագնօք։ Սոյն նիւթերու վրայ մեծաքանակ գումարներ կարենալ ապահովագրելու համար Ընկերութիւնս միացած է եւրոպական **13** լուրջ ապահովագրական հաստատութեանց հետ որոց դրամագլուխն ու պահեստի դրամն է Աւելի քան **100,000,000** Ֆռանք

Լիազօր ներկայացուցիչ Հանրի Թօռնըփ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահչէ-Գաբու, Անանիատուս խան. 12, 13, 14. 369

ԻԼԱՆ ՊԱԳԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Մէքթէպի Իտատիի Թըպպի Շահանէնին 306 սէնէսի քեանունը սանի մաաշ սուրէթի օլուպ գայրէզ մէքիուզամ 3200 զրուշը նաթըգ 5164 խուսուսի վէ 7509 ումումիմոմէրօլը 1 գըթա նիշամիյէ խազինէսի սուրէթի զայ օլմուշ օլուպ մէզքիւր սուրէթ հէր քիմին էլինտէ իսէ 15 կիւնէ գատար Մուհասէպէյի 2 ինճի չիւպէսինէ թէսլիմ իտիլմէսի վէ իտիլմէտիկի թագտիրտէ զաէրինտան տիկէրի իթա գըլընաճաղը իլան օլունուր։ Նօ. 59 3—3

Ասաքիրի Շահանէ մինտէրիճէրի իչին միւպայէա օլունաճագ օլան 5000 գըյէէ քիւեահին պէհէր գըէէսի 14 բարասա Թալիպի ճօհտեսինտէ օլուպ քեանունը էվվէլը Րումինին 28 ինճի բազար իրթէսի կիւնիւ գարարը գաթիյէ վէրիլէճէկինտէն, Թիճաթը մէզքիւրէտէն թէնզիլաթ իճրասը իւէ իթաէ թալիպ օլանլարըն մազամը Սէրասքէրի լէվազիմաթը ումումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի՝ Նօ. 60 3—3

THE ECONOMICON
TEION EIKONOMIKON
ԹԷՅ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ
MARQUE DEPOSÉE

Ամեն անոնք, որք կ'ուզեն Ճավայի և Չինու ճշմարիտ թէյ խմել, պէտք է դիմեն Կ. Պոլիս, Պահչէ-Գաբու, Ճէլալ պէյ խանի կից Թիւ 10 ՍԱՎՐՈՒԵԱՆ և ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, որու զանազան տեսակ թէյեր թէ՛ տեսակի ազնուութեան, թէ՛ ճաշակի և հոտի անուշութեան և թէ՛ գիներու աժանութեան կողմանէ անհամեմատելի են։

Ցիշեալ վաճառատան թէյերը Թուրքիոյ բոլոր թէյավաճառաց քով կը գըտնուին ի վերև դրուած մարքայով, որու կեղծերը ելած ըլլալով պէտք է զգուշանալ։ 342 28—50

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Սըրէ-Լէյ. Անգլիոյ, Կ. Պոլսոյ և Օտեսայի միջև

ԹՈՄԱՍՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՔ և ԸՆԿ

Անուանք	Թօնոյ	Անուանք	Թօնոյ	Անուանք	Թօնո
Ալպանօ	2000	Ֆլամինկօ	1600	Պալէրմօ	3200
Անճէլօ	3000	Կալիլէօ	5500	Պանտէր	1700
Ապոլլօ	6500	Կիդանօ	2200	Պլասիտօ	1500
Արկօ	2300	Կօզօ	1800	Պօլօ	1000
Արիօսդօ	3000	Կրօտնօ	2200	Քուիդօ	2800
Պասանօ	3000	Հիրօ	2000	Րիալթօ	4400
Պօրօտինօ	2200	Հիտալկօ	3300	Րինալտօ	3200
Պրավօ	2000	Հինտու	7000	Րօլլօ	3000
Պըֆֆալօ	8800	Հումպէր	1200	Րօմէօ	3500
Գէյրօ	2600	Այակօ	5000	Րօզարիօ	3500
Գալիպսօ	2500	Ճիւնօ	2300	Սալէրնօ	4000
Գամէօ	2100	Քէլլօ	2000	Սանդիակօ	8200
Գաթօ	2000	Քօլպինօ	4200	Սաֆօ	2000
Գօմօ	2700	Քօվնօ	2200	Սիլվիօ	2000
Չիքակօ	5000	Լէօ	2000	Սօրէնտօ	4300
Գլիօ	2500	Լէպանթօ	4500	Թ. Ուիլսըն	3000
Գօլըրատօ	3400	Լիվօրնօ	5000	Թասսօ	1200
Տիգօ	2500	Մալմօ	1500	Թօլիտօ	2800
Տօմինօ	2500	Մարէնկօ	4300	Թօրբէտօ	900
Տուրօ	4800	Մարդէլլօ	6500	Ուրպինօ	5000
Տրաքօ	2100	Միլօ	2000	Վօլթուրնօ	5000
Էյնամօ	2600	Մուրիլլօ	3100	Ուէտօ	3600
Էլտօրատօ	3000	Նիլօ	2000	Զէպրա	1000
Էլէքթրօ	3200	Օրլանտօ	3000	Տիֆայնէր	200
Էրաթօ	2600	Օթէլլօ	5000	Զէմօ	200
Ֆալքօն	800	Օդրանդօ	4500	Զէրօ	140
Ֆիտօ	700	Օդդօ	2000	Մօզէլ	120
Էճիփշըն Մօնարք	8000				
Իմփիրիըլ Մօնարք	8000				
Լըգէըն Մօնարք	8100				

«Կրոտնօ» շոգենաւը, նաւապետ Ուտ, ընդհանուր վաճառքով Հըլէն աստ հասաւ։

Տրաքօ շոգենաւը, նաւապետ Բիքըրին, այժմ կը բեռնաւորի ի Հըլ ընդհանուր վաճառքով, և յունվար 14ին պիտի մեկնի ուղղակի Պոլսոյ համար։

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն կ'ընծայուի

Դիմել առ Ֆ. ՀԻԼՏ ԵՒ ՈՒԹՕ
Գործակալք
Թիւ 17-18. Բիւյիւք Մէյլէթ խան Ղալաթիա
293

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

ՄԵԾ ԵՒ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ԲԱՑՈՒՄՆ Ա. ՀԱՍՍ ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՃԱՌԱՏԵՂՒՈՅՆ
որ ի Ղալաթիա, փողոց Վօյվօտա, Նորատունկեան խան, Թիւ 6, 7 և 8

Զանազան և ճոխ բեհեզք, կանանց գլխու ծածկոցք, Սեղանի ծածկոց և անձեռոցներ, Ճերմակեղէնք, Սրփիչ, Թաշկինակ, անկողնոյ ծածկոց, Քօրսէ, կանանց չալիկներ, գիշերազգեստներ, և այլ տեսակ կանանց վերաբերեալ իրեղէններ. Անուշահոտ նիւթեր և այլն և այլն։

Կը խնդրենք արգոյ հասարակութենէն այցել մեր վաճառատունն ուր հետեւեալները կը վաճառուին աժան գիներով և յոյժ նպաստաւոր պայմաններով։

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՏԻՆ 306

ԴԱՐՈՒՍ ՄԵԾ ԳԻՒՏԸ

ԷԼԻՔՍԻՐ ԿՈՏԻՆՕ արագապէս կը բուժէ երիկամանց, Ողնածուծի հիւանդութիւնները, Ինֆլուէնցան, Անարիւնները, ծիւրեալները, և այլն. կ'երիտասարդացնէ և կեանքը կ'երկարէ. Իսկապէս վերանորոգիչ տարր մըն է. արտակարգ զօրութեամբ և աննման առատութեամբ նոր արիւն մը կու տայ. վնասակար հիւթ մը չպարունակելով, ամեն տարիքի մէջ կրնայ գործածուիլ, առանց ոեւէ վտանգի։

Շիշը 20 Ֆրանք. ի Փարիզ, Սէն Լազար փողոց Թիւ 7, վարչութեան կեդրոնատեղիէն խնդրել Տքթ. Ժիւլ Լաֆաժի տետրակը, պսակաւոր Փարիզի բժշկական Համալսարանէն. այդ տետրակը պիտի ղրկուի ձրիապէս և առանց ծախքի։

Ի Կ. Պոլիս կը վաճառուի [illegible] դեղարանը։

Լ'ԷՔՕՆՕՄԻ ԷՆԹԷՌՆԱՍԻՕՆԱԼ

L'ECONOMIE INTERNATIONALE

ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ, ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ, ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Ապահովագրական փոխադարձ ընկերութիւն վասն վերակազմութեան դրամագլխոյ

Հաստատեալ Գաղղիոյ Հանրապետութեան 1868 յունվար 22 հրամանագրոյն համեմատ

ԿԸ ԳՈՐԾԷ ԸՆԴ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՄԲ ԳԱՂՂԻՈՅ ՏԷՐՈՒԹԵԱՆ

Ամեն ոք գիտէ խնայողութեան կարեւորութիւնը, բայց շատ անգամ դրամնալով մեր խնայած և աւելցուցած ստակներն ընդունող յատուկ հաստատութիւններ կը կորսնցնենք դրամագլուխ մը կազմելու առիթն և հազար ու մէկ պատճառներ գտնելով՝ մեր խնայածստակներն յումպէտս կըվատնենք։

Փոքր գումարներով դրամագլուխ մը կազմելն ալ դժուարին և գրեթէ անկարելի է, եթէ այսպիսի ընկերութեան մը հետ մասնաւոր կապակցութիւն մի չունենանք։

Ահաւասիկ «Լ'Էքօնօմի Էնթէռնասիօնալ» ընկերութիւնն որուն փոքր գումարներ, այսինքն ամիսը հինգ. տասը եւն վճարելով, ապագային մեր ձեռքը կ'ունենանք համեստ դրամագլուխ մը։

ԱՐՈՒԹԷՆ ՕՖՏՈՒԻՆՔ 39

Աւելի մանրամասն տեղեկութիւն ուզող և բաժանորդագրուիլ փափաքողները կը հրաւիրուին դիմել ի Սիրքէճի, հանրային պարտուց պաշտօնատան դիմացը, Կիւլպէնկեան խան, Թիւ 26-27. ընդհանուր տնօրէն Բ. ՇԷՀԻՐԼԵԱՆԻ կամ ընդհանուր քննիչ ԱՆԻՔՏՈՍ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ։

MERVEILLEUSE DÉCOUVERTE!

Plus d'ASTHME, Plus de SUFFOCATIONS

Les *Papiers*, les *Poudres*, les *Cigarettes*, à base de **narcotiques**, calment **momentanément** vos *souffrances épouvantables*, mais vous tuent *sûrement*.

ASTHMATIQUES!

Le SEUL CURATIF de l'ASTHME, Le SEUL REMÈDE INOFFENSIF qui GUÉRIT, c'est la

LIQUEUR DE L'ÉTOILE

du Chimiste **Lastes**, perfectionnée et préparée par Mario LECHAUX, Phn-Cie, 164, r. Ste-Catherine, BORDEAUX

Une intéressante Notice, contenant tous les renseignements sur la *médication* et de nombreuses attestations de son efficacité, est envoyée gratis et franco à tous ceux qui la demandent.

DÉTAIL : Dans toutes les bonnes Pharmacies.

ԼԱՆՔԱՇԱՅՐ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ի ՄԱՆՉԷՍԴԸՐ

Հիմնեալ 1852 ին

Դրամագլուխ Անգլ. Ոս.	3,000,000
91 դկ. 31ին աւանդ տրուած դմ.	1,771,006
1891 դեկ. 31ին պահեստ	1,635,903
Հասոյթ 1891 ին	1,851,329

Այս ընկերութիւնը ընդդէմ հրդեհի կապահովագրէ ամեն տեսակ շէնք, կահ, ապրանք, ի Պոլիս և ի շրջակայս ինչպէս և նաւահանգստին մէջ.

Վնասի ատեն արագ և խղճմտօ վճարում։ Տեղեկութեանց համար դիմել առ գործակալութիւնն ընկերութեան, 1 և 2 Իզզէթ փաշա խան, Ղալաթիա

ՐԻՉԱՐՏ Մ. ՊՈՆՏ
Ներկայացուցիչ
257 ՊՈՆՏ, ՍԷԼԼԸՐ ԵՒ ԸՆԿ.

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվըրփուլի և Միջերկրականի միջև բանող շոգենաւք

Անուանք	Թօնոյ	Անուանք	Թօնոյ
Քառնաքա	4200	Սֆինքս	3000
Թէբէս	4000	Օազիս	3000
Օզիրիս	4000	Նէֆթիս	3000
Սէսօստրիս	3250	Բէրսա	3000
[illegible]	3250	Լօթիւս	800
Մեմֆիս	3250	[illegible]	800
Մարէօթիս	3250	Ամազիս	700

Դիմել առ Ժ. Վ. ՎԻԹՕԼ և ԸՆԿ.
Ուիթթօլ խան
ՋԷՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ.
292 31, Ջէյմս Սթրիթ Լիվրբուլ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՔԵԱՆ

Ն. ՓԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Մարսիլեայի և Պօնթոսի միջև կանոնաւորագնաց բանող

Բարիզ-Լիոն-Մարսիլիոյ երկաթուղաուղեւորութիւնն ի միասին առնլով,
Ա. կարգ 245 Ֆրանք
Բ. » 175 »

Ապրանքի և այլ տեղեկութեանց
Նաւաբեռնի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար
Դիմել առ գործակալութիւն
ԹԻՄՈԹԷ ԲԸՂՊՈՒԼ
5 Մահմուտ Սիթէ Փրանսէ

ՌՈՅԵԱԼ ԷՔՍՉԷՆՃ

ԱՍԻՒՐԱՆՍ ՔՈՌԲՈՐԷՇԸՆ

ԱՄԵՆԷ ՀԻՆ ԵՒ ԱՄԵՆԷ ՄԵԾ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1720 ԻՆ

Դրամագլուխ աւելի քան Անգլ. ոսկի **4,000,000**
Ցարդ հրդեհի արկածից համար տուած է » **35,000,000**

Ընկերութիւնը կ'ապահովագրէ քարաշէն և փայտաշէն ամեն տեսակ կալուածներ, կահ կարասիք և ապրանք։

Վճարմունք ամենայն կանոնաւորութեամբ և մանաւանդ առանց որ և իցէ **ԶԵՂՉԻ** կը կատարուին։

Աւելի ընդարձակ տեղեկութիւն առնուլ փափաքողք կը հրաւիրուին դիմել առ Ընդհանուր գործակալս Ճ. Վ. ՈՒԻԹԱԼ ԵՒ ԸՆԿ.
140 Պահչէ Գաբու, Մէյտանճըք սօքաք, Ուիթալ խան։

EMULSION SCOTT

(ՍԳՈՏԳԻ ՕՀԱՐԱԿ)

ՄՈՐՈՒԻ ՁԿԱՆ ՕՂՈՒՏ ԻՒՂ

Իփոփոսֆիթ տը շոյ և սոտոյով

Պատրաստեալ ձեռամբ ՍԳՕՏԻ և ՊՕՈՒՆԻ ի Նիւ-Եօրք։

Կաթին չափ ախորժահամ է

Մորիւ ձկան համ իւղի բոլոր յատկութիւններէն զատ, իբփօսֆիդներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ Թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոյլերը
Կը բուժէ հազը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց ճողածութիւնը

Բժիշկներէն ընդունուած է, ախորժ համ ու հոտ ունի, դիւրամարս է, և ամենէն փափուկ ստամոքսները կը տանին զայն.

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով։

Գործակատարք ի Կ. Պոլիս, ՀԱՆԸՐ ԵՒ ՀԻՐԵԱԼ

COMP RUSSE

DE NAVIGATION A VAPEUR ET DE COMMERCE

ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ, ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Շաբթուան երթեւեկութիւնք

Բշ. 28 9 Օտեսայի սուրհանդակ, ժամ 2ին յետ միջօրէի.
· 29 10 Աղեքսանդրիոյ ուղղակի սուրհանդակը, ժամ 5ին յետ միջօրէի. Պիրէոսի ճամբով,
Դշ 30 11 Սեվաստոպոլի սուրհանդակ, առաւօտեան ժամ 10ին։
Դշ 30/11 Սուրհանդակ դէպի Փոքր Ասիոյ նաւահանգիստները մինչեւ Պաթում առաւօտեան ժամը 11ին։
շ. 31/12 Օտեսայի սուրհանդակ, ժամ 2ին յետ միջօրէի.

Ազդ.—Դեկտ. 9,10, երեքշաբթի օրը Կ. Պոլսէն դէպի Սուրիոյ նաւահանգիստները մեկնող ուղեւորք Զմիւռնիոյ մէջ պիտի հանդիպին Թրիբոլի Պէյրութ, Եաֆա, և Բօր-Սայիտ գացող շոգենաւին 2

ՔԻՒՆԱՐՏ (CUNARD)

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ

Ամիսը երկու անգամ կը բանին Լիվըրփուլի և Արեւելից միջև

Անուանք	Թօնոյ	Անուանք	Թօնոյ
Ումպրիա	7718	Գադալոնիա	4845
Էթրուրիա	7718	Պօթնիա	4531
Սէրվիա	7391	Սամարիա	3574
Աւրանիա	7268	Մարաթոն	2403
Պավոնիա	[illegible]	Պավիա	2393
Սեֆալոնիա	5517	Սարակօսա	2166
Կալլիա	4803	Թարիֆա	2246
Սկիթիա	4557	Պալմիրա	2144
Ալէփօ	2143	Թրինիտատ	899
Քէտար	1876	Մարօքքօ	1855
Շէրպուրկ	1614		

«Շերպուրկ» շոգենաւը, նաւապետ Լոյտ, Լիվրբուլէն աստ կը սպասուի դէպ ի յունվարի 5ին։

Դիմել առ ԹՈՄԱՍ Ջ. ՃՈԼԻ գործակալ
Thomas C. Joly
Սէֆքարեանի խան Թիւ 401
17 Ղալաթիա

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ Կ. ՊՈԼՍՈՅ ԵՒ ՔԻՒՉԻՒՔ-ՉԷՔՄԷՃԷԻ

Սկսեալ ի 1 Հոկտեմբեր (Ն. Տ.) 1892, մինչեւ ցնոր տնօրինութիւն

Կ. ՊՈԼՍԷՆ ՔԻՒՉԻՒՔ-ՉԷՔՄԷՃԷ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	8	62	10	12	14	16	18	20	22	24	26	28	30	32	34	36	38	40	42	44	46	48				
	Առաւօտ												Իրիկուն													
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Կ. Պոլիս ...	6 00	6 30	7 00	7 30	8 30	9 ...	9 30	10 ..	10 30	11 ...	11 30	12 ...	1 30	2 ...	2 30	3 ...	4 ...	4 30	5 ..	5 30	6 ...	6 30	...	...	...	..
Գում-գաբու ...	6 09	6 41	7 09	7 39	8 40	9 9	9 40	10 9	10 39	11 9	11 42	12 9	1 39	2 9	2 39	3 9	4 09	4 41	5 10	5 39	6 09	6 39	...	...	...	...
Եէնի-գաբու ...	6 13	..	7 13	...	8 44	9 13	9 44	10 13	10 43	11 13	11 46	12 13	1 43	2 13	2 43	3 13	4 13	4 45	5 14	5 43	6 13	6 43	...	...	...	...
Տաւուտ փաշա ...	...	...	...	...	...	...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Սամաթիա ...	6 19	...	7 19	...	8 50	9 18	9 50	10 18	10 49	11 19	11 52	12 19	1 49	2 18	2 49	3 19	4 19	4 51	5 20	5 49	6 19	6 49	...	...	...	...
Եէտի-գուլէ ...	6 23	6 53	7 23	7 48	8 54	9 20	9 54	10 20	10 54	11 23	12 09	12 22	1 53	2 20	2 53	3 23	4 24	4 56	5 25	5 55	6 23	6 55	...	...	...	...
Մագրիգիւղ ...	6 36	7 12	7 36	8 03	9 08	...	10 8	... ...	11 8	11 34	12 19	... ...	2 04	...	3 03	3 38	4 37	5 06	5 37	6 07	6 35	7 7	...	...	...	..
Այ Ստեֆանօ ...	...	7 26	...	8 12	9 17	...	10 17	... ...	11 17	11 44	... ...	... ...	2 13	...	...	3 47	4 47	...	5 46	6 17	...	7 16	...	...	...	...
Քիւչիւք Չէք. ...	...	7 36	...	...	...	...	... ...	... ...	... ...	11 53	... ...	... ...	...	...	...	...	...	...	...	6 26	...	...	...	...	...	...
....	...	...	...	...	...	...	... ...	... ...	... ...	...	... ...	... ...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	..	...	...

ՔԻՒՉԻՒՔ-ՉԷՔՄԷՃԷԷՆ Կ. ՊՈԼԻՍ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	9	11	13	15	17	19	21	23	25	27	29	31	33	35	37	39	41	43	45	47	49	61			
	Առաւօտ										Իրիկուն														
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Քիւչիւք Չէք. ...	...	...	7 15	...	...	...	... ...	... ...	... ...	... ...	... ...	12 45	...	...	...	...	...	...	...	...	...	7 07	... ...	... ...	... ...
Այ Ստեֆանօ ...	6 25	...	7 24	...	8 30	...	9 30	... ...	10 30	11 25	... ...	12 57	...	...	2 25	...	3 57	4 18	...	5 58	...	7 22	... ...	... ...	... ...
Մագրիգիւղ ...	6 34	7 13	7 36	8 12	8 41	...	9 41	... ...	10 40	11 40	12 40	1 10	...	...	2 34	3 11	4 06	5 09	5 38	6 08	6 38	7 44	... ...	... ...	... ...
Եէտի-գուլէ ...	6 50	7 24	7 47	8 24	8 53	9 25	9 53	10 25	10 52	11 55	12 52	1 24	1 52	2 25	2 50	3 22	4 21	5 23	5 52	6 22	6 52	8 07	... ...	... ...	... ...
Սամաթիա ...	6 56	7 28	7 51	8 28	8 57	9 28	9 57	10 28	10 56	11 58	12 56	1 28	1 56	2 28	2 56	3 26	4 26	5 27	5 56	6 26	6 56	...	... ...	... ...	... ...
Տաւուտ փաշա ...	...	...	...	...	...	...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	...	...	...	...	...	...	...	...	...	...	... ...	... ...	... ...
Եէնի-գաբու ...	7 02	7 34	7 57	8 34	9 03	9 34	10 03	10 34	11 02	12 04	1 02	1 34	2 02	2 34	3 02	3 32	4 32	5 33	6 02	6 32	7 02	..	... ...	... ...	... ...
Գում-գաբու ...	7 08	7 38	8 01	8 38	9 08	9 38	10 08	10 38	11 08	12 08	1 08	1 38	2 08	2 38	3 08	3 38	4 38	5 38	6 08	6 38	7 08	8 23	... ...	... ...	... ...
Կ. Պոլիս ..	7 16	7 46	8 09	8 46	9 16	9 46	10 16	10 46	11 16	12 16	1 16	1 46	2 16	2 46	3 16	3 46	4 46	5 46	6 16	6 46	7 16	8 32	... ...	... ...	... ...
....	...	...	...	...	...	...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	...	...	...	...	...	...	...	...	...	...	... ...	... ...	... ...

Փոքր ծրարներն անխտիր կ'ընդունուին ամեն կառախմբի մէջ, իսկ մեծ ծրարք Պոլսէն Մաքրիգիւղ կամ աւելի հեռի կայարանաց միջև բանող կառախմբոց մէջ միայն ընդունուին

ցնոր տնօրինութիւն, Թիւ 8. 10. 14. 43. 47 և Թիւ 49 կառախումբերը միայն վայրկեան մը կանգ պիտի առնուն ի Զէյթուն-Պուռնու։ 1